ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑՈՒ՝ ԻԸ. 3 ՍԱՂՄՈՍԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

ԺԳ-ԺԴ. դդ. բանիմաց եւ խորագետ եկեղեցական գործիչներից է Կիրակոս վարդապետ Երզնկացին († 1355)՝ մատենագիր, աստվածաբան, մեկնիչ, փիլիսոփա, շարականագիր, տաղասաց, մանկավարժ, բաբունապետ, որի անտիպ երկերից է ԻԸ. 3 սաղմոսին նվիրված մեկնողական ճառը[1]: Այն մեզ է հասել ձեռագիր մեկ ընդօրինակությամբ[2]: Կիրակոս բաբունին այս ճառում անդրադառնում է «ձայն» հասկացության սահմանմանը, Հայոց Եկեղեցում կանոնակարգված ութձայնի եւ երկու սրեղինների սուրբգրային հիմքերին, տալիս սաղմոսի աստվածաբանական եւ դրախտի չորս գետերի խորհրդաբանական բացատրությունները: Այս երկում նույնպես երեւում է Կիրակոս Երզնկացու քաջատեղյակությունը նյութին եւ նրան հարակից խնդիրների շրջանակին:

Հեղինակը նախքան բուն սաղմոսի մեկնությունը, սուրբգրային, իմաստասիրական եւ այլ օրինակներով ընթերցողին նախապատրաստում է՝ խորամուխ լինելու սաղմոսի նրբությունների եւ խորհուրդների մեջ: Ինչպես վարպետը եւ իր գործի գիտակը նախ նյութն են պատրաստում եւ ապա սկսում իրենց գործը, նույն ձեւով աստվածաբնակ Մովսես մարգարեն վկայության խորանի համար նախ համապատասխան նյութերը պատրաստեց եւ ապա դրանցից՝ վկայության խորանը: Ըստ ճառագրի՝ չպետք է զարմանալ այս ամենի վրա, որովհետեւ արարիչ Աստված նույնպես նախ չորս տարրերը ստեղծեց եւ ապա մնացած բաները: Օգտվելով եւ մեջբերելով Ս. Դավիթ Անհաղթի (Ե. դար) «Սահմանք իմաստասիրության» երկի համապատասխան հատվածը՝ ճառագիրը նշում է, որ ամեն մի արվեստ ունի ենթակա եւ նպատակ, եւ՝ յուրաքանչյուրից կրկնակի, որովհետեւ ունի մերձավոր ենթակա եւ հեռավոր, մերձավոր նպատակ եւ հեռավոր: Ուստի մեզ համար մերձավոր ենթական Հին եւ Նոր կտակարանների ուսումնասիրությունն է, իսկ հեռավորը՝ Դավիթ մարգարեի այս սաղմոսը: Կիրակոսն ընդգծում է, որ հեռավոր նպատակին հասնելու եւ Ս. Գրքում Աստծո գիտության եւ իմաստության ամբարված եւ ծածկված գանձերը հասկանալու համար պետք է ազատ լինել բոլոր նյութական բաներից՝ առավել ներթափանցելու համար հոգեւոր խորհուրդների մեջ[3], «զի ճառս է իբրեւ զմարմին, իսկ միտքն որպես հոգի, որով անձնաւորի ճառս, որ ասէ. «Ձայն Տեառն ի վերայ ջուրց»:

ճաշակով:

1 Այս սաղմոսն այժմ էլ կիրառվում է մեր եկեղեցու ծիսական կյանքում՝ մկրտության խորհրդի եւ ջրօրհնեքի արարողության ժամանակ:

2 ՄՄ ձեռ. Հմտ 2187, 1346 թ., թ. 105ա-121բ: Ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ա., կազմեցին Օ. Եգանեան, Ա. Ջեյթունեան, Փ. Անթաբեան: Ներածությունը՝ Օ. Եգանեանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1965, էջ 741:

3 Կիրակոս Երզնկացու այս միտքը համերաշխ է Ընդհանրական Եկեղեցու հայրերից Ս. Դիոնիսիոս Արիսպագացու այն կարծիքին, որ Աստծուն մերձենալու խորհրդապաշտական գործընթացի առաջին փուլը՝ մաքրագործումը (կատարսիսը), մարդկային հոգու ձերբազատումն է ամեն տեսակ զգալի-նյութական կաշկանդումներից, ամեն տեսակ խառնուրդներից. տե՛ս The Armenian Version of the works attributed to Dionysius the Areopagite (=**Dionysius the Areopagite**), edited by Robert W. Thomson, Lovanii, 1987, Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 448, Scriptores Armeniaci, Tomus 17, p. 12:

Կիրակոս Երզնկացու այս ճառը ցույց է տալիս, որ այդ ժամանակաշրջանում եւս ասպվածաբան-իմաստասերներին հուզել է «ձայն» հասկացության սահմանումը: Մեջբերելով ձայնի մասին վաղ միջնադարյան այն տեսակետը, թե՝ «Ձայն է վիրաւորութիւն աւդոյ»՝[4] Երզնկացին նշում է. «Այլ զայս սահման հոռի գոլ համարեցան իմաստասէրքն, զի ոչ զուգադարձի: Քանզի որ ձայն է, նա եւ վիրաւորություն աւդոյ, այլ ոչ որ ինչ վիրաւորութիւն աւդոյ, այն ինչ եւ ձայն, վասն զի եւ ասէրք ոք եթէ հարկանէ զաւդ, ոչ բացակապարէ ձայն»[5]: Այնուհետեւ նա տալիս է ձայնի սահմանումը. «Ձայն է բացակապարումն գանչեցելոյ ի մեզ հագագի եւ երիւրեցելոյ ընդ խոշորութիւն շնչափողին եւ տեսակարարեցելոյ լեզուաւ եւ մակալեզուաւ»[6]: Նիկողոս Թահմիզյանը, անդրադառնալով Կիրակոս Երզնկացու եւ Դավիթ Անհաղթի՝ ձայնի մասին տեսակետների տարբերությանը, նշում է. «Կիրակոս Երզնկացին ակնարկում է Դավիթ Անհաղթին եւ մեջ է բերում հենց նրա խոսքերը մասնակի մի երեւույթի՝ մարդկային ձայնի մասին, շրջանցելով, սակայն, այն պարագան, որ մեծ իմաստասերը ամենեւին չի ժխտել «ձայն է վիրաւորություն աւդոյ» ձեւակերպման բուն բովանդակությունը: Այլ՝ լոկ թերի է համարել այն (սահմանումը), որ «ոչ զուգադարձի» (առ սահմանելին), ինչպես պահանջում են ձեւական տրամաբանության օրենքները, եւ միայն այդ իմաստով դրան հակադրել է մարդկային ձայնի իր սահմանումը»[7]: Կիրակոս Երզնկացին, քաղելով Դավիթ Անհաղթի՝ Պորփյուրի «Ներածության» վերլուծությունից, խոսում է նաեւ ձայնի չորս կարգերի մասին, եւ դրանք հաստատում պարզ օրինակներով[8]:

Ձայնի մասին դատողություններում Կիրակոս վարդապետն անդրադառնում է նաեւ Հայոց Եկեղեցում կանոնակարգված ութձայնի եւ երկու ստեղիների տեսությանը, «որ լինի Ժ.՝ ի պայծառութիւն եւ ի փառաբանութիւն սուրբ եւ աստուածընկալ խորանիս եւ ի հրճուումն մանկանց Եկեղեցւոյ»: Կիրակոսը մեջբերում է չորս բուն եւ չորս օժանդակ ձայների ծագման սուրբգրային հիմքերը՝ ազդված լինելով արեւելագիտության եւ հայրաբանական համաբնույթ երկերից[9]: Նա իր հիմնավորումներն ապացուցում է սկզբում Հին, ապա Նոր կտակարաններից բերված օրինակներով:

Այսպես՝ առաջին ձայնը (ԱՁ) պատշաճ է մեր նախահայր Ադամին, որ քահանայա-

---

4 Տե՛ս **Դաւիթ Քերական**, Մեկնութիւն Քերականին (=**Դաւիթ Քերական**). «Մատենագիրք Հայոց», Ե. հատոր, Է. դար, Անթիլիաս-Լիբանան, 2005:

5 Տե՛ս **Դաւիթ Անյաղթ**, Երկասիրութիւնք փիլիսոփայականք (=**Դաւիթ Անյաղթ**), համահաւաք քննական բնագրերը եւ առաջաբանը՝ Ս. Ս. Արեւշատեանի, Երեւան, 1980, էջ 75: Ձայնի սահմանման մասին վաղագույն վկայություններից մեկը պահպանվել է Եղիշե վարդապետի (Ե. դար) «Մեկնութիւն Յեսուայ եւ Դատաւորաց» գրվածքում. տե՛ս **Նակոբ Քյոսեյան**, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստուածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 103:

6 Անդ:

7 **Նիկողոս Թահմիզյան**, Ձայնի մասին ուսմունքը հին եւ միջնադարյան Հայաստանում. «Բանբեր մատենադարանի», Հ՝ 6, 1962, էջ 147:

8 Անդ, էջ 138-139:

9 Հայոց Եկեղեցում գործածվում են ձայնի հետեւյալ տեսակները՝ ԱՁ (Առաջին ձայն), ԱԿ (Առաջին կողմ), ԲՁ (Երկրորդ ձայն), ԲԿ (Երկրորդ կողմ կամ Ապագ կողմ), ԳՁ (Երրորդ ձայն), ԳԿ (Երրորդ կողմ կամ Վառ ձայն), ԴՁ (Չորրորդ ձայն), ԴԿ (Չորրորդ կողմ) եւ երկու ստեղիներ: Խնդրի մասին տե՛ս **Անանա Արեւշատյան**, Հայ միջնադարյան «Ձայնից» մեկնություններ, Երեւան, 2003, էջ 8-85: Ցավոք, երաժշտագետն անտեղյակ է եղել Կիրակոս Երզնկացու այս գործին, եւ բնագրերի բաժնում չի գտնվել Կիրակոսի ճառի համապատասխան հատվածը:

կան, մարգարեական եւ թագավորական շնորհներով էր զարդարված, բայց անհնազանդության պատճառով զրկվեց այս ամենից եւ արտաքսվեց դրախտից: Իսկ Նոր Ուխտում նույն առաջին ձայնով հրեշտակները հովիվներին ավետեցին Փրկչի հրաշափառ Ծնունդը[10]: Ի տարբերություն մյուս մեկնիչների՝ Կիրակոսն առաջին ձայնը կապում է նաեւ Տիրոջ մկրտության հետ, որի ժամանակ հայտնվում է Ս. Երրորդությունը, եւ Հայր Աստծո ձայնը վկայում է Որդու մասին: Աձ-ի բացատրության ժամանակ Կիրակոսն ընդգծում է նաեւ տվյալ ձայնի կապը եկեղեցու ծիսական-գործնական կյանքի հետ, որն իր արտացոլումն է գտել մեր «Ժամագրքում». «Եւ Յով[հ]աննէս զաւրհնութիւնս եւ զփառս մատոյց, եւ զհետ «Աւրհնեալ Տէր բնակեալն» ձայնն»[11]: Իսկ առաջնակողմ ձայնը (ԱԿ) խորհրդանշում է Մովսեսի առաջնորդությամբ իսրայելցիների անցումը Կարմիր ծովի վրայով, Աստծուն ուղղված նրա օրհներգությունը[12] եւ Բաբելոնի հնոցում երեք մանուկների փառաբանությունը: Այն Նոր Ուխտում առնչվում է Քրիստոսի Հարության եւ Տիրոջ՝ Երուսաղեմ հաղթական մուտքի հետ[13]:

Երկրորդ ձայնը (ԲՁ) նման է Սինայի փողի ձայնին: Նույն ձայնեղանակում հրեշտակը յուղաբեր կանանց ավետեց Հիսուսի Հարության մասին: Իսկ նրա կողմ ձայնը (ԲԿ) Երիքովի կործանման խորհուրդն ունի, որը Նոր Ուխտում Մեծ Պահքի ընթացքում սաղմոսների ընթերցումներն են[14]: Իսկ նույնի ստեղին կապվում է Սամվել մարգարեի եւ կամավորապես Տիրոջը գերեզման դնելու հետ:

Երրորդ ձայնը (ԳՁ) հիշեցնում է Դավիթ մարգարեին, որ երգում էր տապանակի առաջ, իսկ Նոր Ուխտում խորհրդանշում է Սուրբ Հոգու էջքն առաքյալների վրա՝ Հոգեգալստին: Իսկ նրա կողմը (ԳԿ) Սողոմոնի տաճարի նավակատիքն է, եւ Մովսեսի խորանի օրհնությունը: Իսկ Նորում քահանայապետի միջոցով Եկեղեցու մաքրությունն ու պայծառացումն է[15]:

Չորրորդ ձայնը (ԴՁ) խորհրդանշում է տաճարի քահանաներին, իսկ Նորում ապականված Եկեղեցու վերանորոգությունն ու պայծառացումը քահանայապետի ձեռամբ, ինչպես նաեւ Հավատո հանգանակի խոստովանությունը[16]: Նրա կողմը (ԴԿ) Ս. Հոգով

10 Հմմտ. «Մովսէսի Քերթողի յաղագս կարգաց Եկեղեցւոյ բացայայտութիւնք» (=**Մովսէս Քերթող**). «Մատենագիրք հայոց», Դ. հատոր, Է. դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 445: Այս երկը հայ մատենագրության մեջ պահպանված ձայնեղանակներին նվիրված հնագույն աղբյուրներից է. երկի մասին տե՛ս **Ն. Կ. Թահմիզյան**, Մովսես Սյունեցին եւ նրա «Յաղագս կարգաց» գրվածքը. «Լրաբեր», 1972, թիւ 11, էջ 85-94:

11 Տե՛ս «Ժամագիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ» (=«Ժամագիրք»), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, էջ 371: Կիրակոսն այստեղ նկատի ունի Երեկոյան ժամերգության ժամանակ ասվող մաղթանքը, որը վերագրվում է եւ՛ Յովհաննէս Մկրտչին, եւ՛ Յովհաննէս Մանդակունուն. տե՛ս **Նորայր արք. Պողարեան**, Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 23:

12 Հմմտ. **Մովսէս Քերթող**, էջ 445:

13 Մովսես Քերթողը երեք մանուկների օրհնությունը կապում է երկրորդ ձայնի հետ, իսկ Քրիստոսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքը՝ երրորդի. տե՛ս անդ:

14 Երկրորդ ձայնի օժանդակ ձայնի մասին Մովսես Քերթողն ասում է. «Իսկ կողմն նորին ողբերգական ձայն. սովաւ յատրինեցան Սաղմոսք ի սուրբ ի պահս քառասնորդացն եւ Քրիստոսի չարչարանաց առուրն, ըստ երկրորդի զոչման ապաշխարողացն, զառաջին գբարեգարդութիւնն ոչ ունելով». տե՛ս անդ:

15 Հմմտ. «Անանիայի վարդապետի յաղագս գիտութեան ձայնից». տե՛ս **Աննա Արեւշատյան**, նշվ. աշխ., էջ 120:

16 Անդ, էջ 120:

լցված առաքյալների՝ Քրիստոսի նոր վարդապետության քարոզությունն է[17], իսկ ստեղին սերովբեների օրհներգությունն է, որը Նոր Կտակարանում կապվում է Ս. Հաղորդության խորհրդի հաստատման հետ:

Լինելով իր ժամանակի նշանավոր բաբունապետներից՝ Կիրակոս Երզնկացին անդրադառնում է նաև սաղմոսի աստվածաբանական բովանդակությանը: Աստված «անքանակ է, անուր եւ աներբ» եւ ամեն ինչի արարիչն է: Դավթի այս սաղմոսում եւս բացահայտվում է Ս. Երրորդությունը. «Եւ դարձյալ՝ ձայն Տեառն, եւ Աստուած փառաց՝ Հոգին, եւ Տէրն Ինքն ի վերայ՝ Որդին»:

Ճառագիրը տեղյակ է Սուրբ Գրքում գործածված «ձայն» հասկացության տարբեր իմաստներին: Ձայն ասելով՝ երբեմն նկատի ունի Աստծո հրամանը, խոսքը, հողմը, որոտը, ինչպես նաև այն զգալի ձայնը, որ լսում էին Մովսեսն ու մյուս մարգարեները: Հենց այս վերջինը նկատի ունի Դավիթ մարգարեն՝ ասելով «Ձայն Տեառն ի վերայ ջուրց», որն իրականացավ Հորդանան գետում Տիրոջ մկրտության եւ Թաբոր լեռան վրա պայծառակերպման ժամանակ, երբ Հայր Աստծո ձայնը վկայեց Որդի Աստծո սիրելիության մասին[18]:

Աստծո ձայնը տարբերվում է մյուս ձայներից, «քանզի արարչական ձայն է եւ ոչ կարաւտի ձայնական գործեաց, զի անեղ էական է, եւ եղելոցս էակ, եւ ի վեր քան զամենայն սահման»:

Մեկնաբանելով սաղմոսի «Ձայն Տեառն» արտահայտությունը՝ Կիրակոսն անդրադառնում է արարչագործության սկզբին. . «Այլ ի վերայ գոլ ջրոյն զձայն Տեառն զայն բացայայտէ՝ ոչ ըստ տեղւոյ գոլ ի վերայ, այլ զի յառաջ, եւ նախ, եւ ի վեր քան զամենայն արարածական բնութիւն եւ էութիւն է, եւ յետոյ եւ վերջին ամենայն էիցս է»:

Ըստ Կիրակոսի՝ «Ձայն Տեառն» ասելով՝ այստեղ սաղմոսերգուն Տիրոջ ձայնը զանազանում է «արարածական» եւ «ծառայական» ձայներից, եւ ցույց տալիս «ճշմարիտ Էրն»: «Աստուած» անունը բխում է Նրա «արարիչ» իմաստից, իսկ «Տէր» անվանումը պատշաճ է նրա «արքունական» զորությանը: «Եւ արարչականին անուն է Աստուած, եւ արքունականին՝ Տէր, եւ արարչականին է բարեգործելն եւ նախախնամելն»,- գրում է Կիրակոսը՝ հետագա շարադրանքում ավելի մանրամասնելով իր մտածումները[19]: Հե-

17 Չորրորդ ձայնի եւ նրա կողմի մասին Մովսես Քերթողը գրում է. «Իսկ չորրորդ ձայն՝ ընդհանուր զքարոզութիւնն յայտնէ ըստ չորս անկիւնս աշխարհի, ըստ չորից ժողովոցս եւ ըստ չորից բաղկացութեան մարդոյս: Իսկ կողմն նորին՝ ուրախալից ձայն. սովաւ շարագրեցան սպողոգիականք Սաղմոսք ի սուրբ Պասեքին, ի Յարութեանն Քրիստոսի, ի մի պարունակութիւն երկնայնոցն եւ երկրաւորացս, ըստ առաջին բաղկացութեանն». տե՛ս անդ: Ինչպէս իրավամբ նկատել է Աննա Արեւշատյանը, սրան հաջորդող մեկնութիւնն ունի վախճանաբանական բնույթ. տե՛ս **Աննա Արեւշատյան**, նշվ. աշխ., էջ 49-50:

18 Հմմտ. «Մեկնութիւն Սաղմոսաց՝յօրինեալ ի Հ. Միքայէլ վարդապետէ Չամչեանց՝ յաշակերտութենէ ամենապատիւ Մխիթարայ Աբբայիօր» (=**Չամչեանց**), հ. Գ, Վենետիկ, 1817, էջ 433, հմմտ. **Է. Մ Բաղդասարյան**, Հովհաննես Երզնկացին եւ նրա խրատական արձակը, 1977, Երեւան, էջ 150:

19 Այս հատվածը մեկնելիս Կիրակոսը հավանաբար օգտվել է Փիլոն Եբրայեցու՝ Ելից գրքի մեկնության համապատասխան հատվածից. տե՛ս «Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս, որ են Մեկնութիւն Ծննդոց եւ Ելից, Ճառք ի Սամփսոն, ի Յովնան եւ Յերիս մանկունս կամ հրեշտակս» (=**Փիլոն**),, Վենետիկ, 1826, էջ 515-516, հմմտ. **Մովսէս Քերթող**, էջ 445: Այս մասին խոսրով Անձեւացու Ժամակարգության մեկնության գրագրում կարդում ենք. «Աստուած անունն արարչական է, որ զնախախնամելն յայտ առնէ՝ ըստ փիլիսոփայի, եւ առ մեզ

գեւաբար ողջ արարչագործությունն Աստծո բարության արդյունքն է: Սաղմոսի նույն հատվածի մեկնության ժամանակ, քաղելով Ներսես Լամբրոնացու Սաղմոսաց մեկնության համապատասխան հատվածից, հեղինակը բարոյական մեկնություն է տալիս՝ ջուրը համեմատելով մարդկային մտքի խորհուրդների հետ, որոնք «դիւրահեղ եւ ծփական» են: Եւ ահա այս մտածումների վրա է հնչում Տիրոջ ձայնը՝ «աստուածային գիտութեանցն ազդեցութիւնք, զի այն ձայն է, որ զայս ջուր ի սէր նորին խռովեցուցանէ բարուք ծփմամբ»:

Եկեղեցու հայրերը «ձայն Տեառն» արտահայտությունը մեկնաբանելիս նշում են, որ նույն այդ ձայնը որոտաց ապստամբ հրեշտակների վրա եւ սաստեց նրանց[20]: Հետեւելով մեկնաբանական այս ավանդույթին՝ Գիրակոսը մեջբերում է Սաղմ. ԺԵ. 14-ը եւ բացատրում. «Յայտ է, թէ դիւական խորհրդոցն սաստեաց»: Հետաքրքրական է, որ Լամբրոնացու բնագրում օգտագործված «դիւրահեղ» բառը Գիրակոսի մոտ դարձել է «դիւական», այսինքն՝ ճառագիրը բառի փոփոխմամբ մեկնել է սաղմոսի այդ հատվածը:

Բացատրելով սաղմոսի «Աստուած փառաց որոտաց» հատվածը՝ Գիրակոսը զուգահեռ է անցկացնում Հոգեգալստի հետ, երբ Ս. Հոգին «որոտմամբ եւ ձայնիւ» իջավ առաքյալների վրա: Սա խորհրդանշում է նաեւ Ս. Հոգու էջքը Տիրոջ վրա մկրտության պահին: Ըստ Գիրակոսի՝ այս հատվածում շեշտվում է Աստծո բարության անսահմանությունը՝ արարչագործությունից մինչեւ այս աշխարհի վախճանը:

Մեկնելով «Եւ Տէրն Ինքն ի վերայ ջուրց բազմաց» հատվածը՝ Գիրակոսն ընդգծում է, որ Դավիթ մարգարեն նկատի ունի Հիսուսին մկրտության ժամանակ, երբ հայտնվեց Ս. Երրորդությունը: Իսկ Տիրոջ մկրտությունը Եկեղեցու խորհուրդներից՝ մկրտության նշանակն է, «զի ամենայն ջուրք աւրհնեցան եւ տուան ի լուացումն Աւազանին մկրտութեան»: Բայց Գիրակոսն այս հատվածին մեկ այլ մեկնություն էլ է տալիս. «Զանսպառ յաւիտեանն նշանակէ, զի անդ ողորմութիւն կամ շնորհաւք թողութիւն ոչ է, այլ հանդէսք դատաստանի եւ հատուցումն գործոց»:

Նա անդրադառնում է նաեւ ջրի տեսակներին, սուրբգրային «Աստծո փառք», «Աստծո բարբառ» արտահայտություններին, տալիս դրախտի գետերի անունների ստուգաբանությունը, ինչպես նաեւ բացատրում է որոտ երեւույթը:

Գիրակոս Երզնկացին այս ճառի համար զանազան աղբյուրներ է օգտագործել՝ Ս. Գիրք, հայրաբանական, իմաստասիրական, քերականագիտական երկեր, «Ժամագիրք» եւ «Շարակնոց»[21] ժողովածուները: Գիրակոսը սովորաբար ոչ միշտ է նշում իր օգտագործած աղբյուրի հեղինակին: Քաղելով զանազան գրվածքներից՝ նա դրանք գրամաբանական հաջորդականությամբ զետեղում է իր երկերում, որով չի ընդհատվում նրա մտքի թելը:

ստուգաբանի, թէ ատ էած զմեզ». տե՛ս «Մեկնութիւն ժամակարգութեան՝ արարեալ երանելւոյն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի, եւ կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի», յՕրթագիւղ, 1840, էջ 99: Խոսրով Անձեւացին Ս. Պատարագի մեկնության մեջ գրում է. «Տէրն անուն վասն տիրելոյն է, իսկ Աստուածն վասն ստեղծանելոյն եւ յաստիս ածելոյ զեղեալքս». տե՛ս «Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի մեկնութիւն աղօթից Պատարագին», Վենետիկ, 1869, էջ 16:

20 Հմմտ. **Չամչեանց**, էջ 438:

21 Տե՛ս «Մատենագիրք Հայոց», Ը. հատոր, Շարական (=Շարական), Անթիլիաս-Լիբանան, 2007:

Բնականաբար յուրաքանչյուր նմանատիպ գործի համար ճառագրի ներշնչանքի եւ իր մտածումները հաստատող անվիճելի աղբյուրն Աստվածաշունչ մատյանն է, որի տարբեր գրքերից Կիրակոսը մեջբերումներ է կատարում ինչպես այս ճառում, այնպես էլ իր մյուս երկերում: Սուրբգրային համարները նա բերում է ուղղակի, համեմատական կարգով եւ ակնարկելով Ս. Գրքի այս կամ այն համարը, հատվածը եւ դրվագը, որոնք ցույց են տալիս, որ հեղինակը ոչ միայն քաջածանոթ է Աստծո խոսքին, այլ նաեւ տվյալ համարի մեկնաբանական ավանդույթին:

Խոսելով դրախտի չորս գետերի մասին՝ Կիրակոսը նշում է, որ դրանք չորս առաքինությունների՝ խոհականության, արիության, ողջախոհության եւ արդարության խորհուրդն ունեն: Այս մտածման համար նա հավանաբար աչքի առաջ է ունեցել Փիլոն Եբրայեցու (ն. Ք. 25-ք. հ. 50) Արարածոց գրքի մեկնության համապատասխան հատվածը[22]: Իսկ «Նախերգան Տեառնընդառաջին» երկում Կիրակոսը դրախտի չորս գետերը նմանեցնում է ավետարանական վարդապետությանը[23]:

Հեղինակն իր ճառում հանվանե հիշատակում է Ս. Դիոնիսիոս Արիսպագացուն, որի «Յաղագս ապտուածային անուանց» երկից իմաստային մեջբերում է կատարել[24]:

Կիրակոս Երզնկացու մատենագրական ժառանգության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը մեծապես ազդված է հայ մեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթի գրվածքներից եւ նրա փիլիսոփայական հայացքներից: Այս գործը նույնպես այդ առումով բացառություն չէ: Կիրակոսը «եռամեծ Դավթից» մի քանի հատվածներ է մեջբերում, որոնք մենք արձանագրել ենք բնագրի տողատակում:

Զայնի ուսմունքի մասին խոսելիս Կիրակոսն օգտվել է միջնադարում կենցաղավարած քերականագիտական մեկնություններից, մասնավորապես Դավիթ Քերականի (Ե-Զ. դդ.)[25] եւ Երզնկայի դպրոցի բաբունապետ Հովհաննես Երզնկացի Պլուզի († 1293) համապատասխան աշխատություններից[26], ինչպես նաեւ ձայնեղանակներին նվիրված հայ միջնադարյան մեկնաբանական երկերից:

Ճառագիրը մի ամբողջական հատված է քաղել Ներսես Լամբրոնացու (1153-1198) ցայժմ դժբախտաբար անտիպ Սաղմոսաց գրքի մեկնությունից՝ առանց մեկնիչի անունը տալու: Փաստորեն Կիրակոսն առաջիններից է, որ օգտվել է Լամբրոնացու կոթողային այս աշխատությունից: Բնագրի տողատակում մենք նաեւ արձանագրել ենք Կիրակոսի ճառի եւ Լամբրոնացու տվյալ հատվածի բառային մի քանի տարբերությունները:

Կիրակոս Երզնկացու այս ճառում իմաստային եւ բառային նմանություններ կանԱ-

22 Հմմտ. **Փիլոն**, էջ 9-10:

23 Տե՛ս **Տիգրան սարկավագ Բաղումյան**, Կիրակոս Երզնկացու «Նախերգան Տեառնընդառաջին» ճառը. «Էջմիածին», 2011, Գ, էջ 95:

24 Տե՛ս **Dionysius the Areopagite**, էջ 133-135:

25 Տե՛ս **Դաւիթ Քերական**: Կիրակոս Երզնկացին Հովհաննու Ավետարանի Ա. 1 համարի մեկնության մեջ մեկ բառացի մեջբերում է կատարել Դավիթ Քերականից՝ նրան անվանելով «եռամեծն Դաւիթ». տե՛ս ՄՄ ձեռ. Հ^{թ} 1098, 1320 թ., թ.127ա:

26 Տե՛ս **Յովհաննէս Երզնկացի**, Հաւաքումն մեկնութեան քերականի, աշխատասիրութեամբ՝ Լ. Գ. Խաչերեանի (=**Յովհաննէս Երզնկացի**), Լոս Անջելես, 1983:

նանիա վրդ. Նարեկացու (Ժ. դ.) «Սակս բացայայտութեան թուոց» աշխատության[27] եւ Վանական Վարդապետի (ԺԲ-ԺԳ. դդ.) մեկ գրվածքի միջեւ[28], որոնք նույնպես արձանագրել ենք բնագրի փողոցակում:

Կիրակոս վարդապետն իր աշխատություններում լայնորեն օգտագործել է Վարդան վրդ. Արեւելցու († 1271) մեկնողական երկերը: Դրախտի չորս գետերին, նրանց աշխարհագրական տեղադրությանն անդրադառնալիս ճառագիրը հատվածներ է քաղել Վարդանի «Լուծմունք ի Սուրբ Գրոց» (Ժղլանք) հանրագիտարանային աշխատությունից[29]: Այս ճառում մեջբերումներ կան նաեւ նրա Արարածոց գրքի խմբագիր մեկնությունից, որտեղ մեջբերված է Ս. Եղիշե վարդապետի Արարածոց մեկնության համապատասխան հատվածը[30], ինչպես նաեւ նրա Սաղմոսաց գրքի մեկնությունից[31]:

Ճառի հրատարակության նպատակն է նպաստել իր ժամանակաշրջանի անվանի բարձունապետ Կիրակոս Երզնկացու գրական վաստակի ուսումնասիրության գործին:

* * *

Բնագրի պատրաստության ժամանակ վերականգնել ենք բառավերջի չգրված յ-երը, -ի ավարտով բառերի սեռական-տրականի ւ-երը (եկեղեցոյ=եկեղեցւո), զանց ենք առել յ-երի անտեղի գործածությունը (ահայ), բացել ենք բոլոր հապավումները: Գրչագրում առկա աւ-ի եւ օ-ի զուգահեռ գործածություններից նախընտրությունը տվել ենք աւ տարբերակին: Ձեռագրում առկա միագրությունները եւ երկգրությունները թողել ենք նույնությամբ (խորամանկություն-խորամանգություն, թարքմանի): Տերունական անունները եւ նրանց փոխարինող դերանունները ներկայացրել ենք մեծատառով՝ առավել հստակ եւ ճշգրիտ դարձնելու համար նախադասությունների իմաստները: Անհրաժեշտության դեպքում մեր կատարած հավելումներն առնված են անկյունավոր փակագծերի մեջ՝ []:

Այսպիսով, Բնագիրը հրատարակում ենք ըստ ՄՄ ձեռ. ՀՄ 2187. Բ., թ. 105ա-121բ, 1346 թ., գրիչ՝ Թորոս Տարոնացի, սպացող՝ Մարտիրոս քհն. Սանահնեցի, 193 թերթ (թ. 105-297), թուղթ, 15,7x11,7, միասյուն, բոլորգիր, 24 տող[32]:

ԶԱՔԱՐԻԱ ԱԲԵՂԱ ԲԱՂՈՒՄՅԱՆ

27 Տե՛ս «Անանիայի հայոց վարդապետի սակս բացայայտութեան թուոց» (=ՍԲԹ). «Մատենագիրք հայոց», Ժ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2009:

28 Տե՛ս «Խորանների մեկնություն» (=**Վանական Վարդապետ**), աշխատասիրեց Վիգեն Ղազարյան, Երեւան, 1995, էջ 301:

29 Տե՛ս ՄՄ ձեռ. ՀՄ 341, 1365 թ. (=«Ժղլանք»):

30 Տե՛ս ՄՄ ձեռ. ՀՄ 1267, ԺԵ. դ. (=**Վարդան Արեւելցի**), «Մեկնութիւն Արարածոց գրոց Եղիշէի վարդապետի». «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Անթիլիաս-Լիբանան, 2003 (=**Եղիշէ**): Բնագրի փողոցակում մեջբերել ենք երկու մեկնությունների համապատասխան էջերը:

31 «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի՝ յօրինեալ սքանչելի Աստուածաբանութեամբ Սուրբ եւ Երջանիկ Տեառն՝ Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ», յԱժդարխան, 1797 (=**Վարդան**):

32 Մասնավոր շնորհակալություն ենք հայտնում Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գեորգ Տեր-Վարդանյանին՝ ճառի ձեռագրի թվային տարբերակը տրամադրելու համար:

Ի ԲԱՆՆ, ՈՐ ԱՍԷ. «ՁԱՅՆ ՏԵԱՌՆ Ի ՎԵՐԱՅ ՋՈՒՐՑ, ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՓԱՌԱՑ ՈՐՈՏԱՑ, ԵՒ ՏԷՐ ԻՆՔՆ Ի ՎԵՐԱՅ ՋՈՒՐՑ ԲԱԶՄԱՑ» (ՍԱՂՄ. ԻԸ. 3)։ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՁՆԿԵՑԻՈՅ ԱՐԱՐԵԱԼ։ ՕԳՆԵԱ՛ ՀՈԳԻ ԱՍՏՈՒԾՈՅ

Արուեստաւորք եւ մակացուք նախ եւ առաջին զնիւթն պատրաստեն առաջիկայ գործոյն, եւ ապա արուեստիւն ճանապարհորդեալ՝ ըստ կարգի եւ ըստ պատշաճի կազմեն զառաջիկայ իրն, եւ ապացուցիւ զբանս հաւաստեցուսցուք։ Եթէ ոք ճարտարապետ արհեստիւ եւ իմաստութեամբ հանդերձեալ իցէ առնել թագ թագաւորի կամ թագաւորական ծիրանիս, նախ նիւթոյն ելեալ՝ ի խնդիր ժողովէ ոսկի, եւ արծաթ, եւ լուսաճաճանչ մարգարիտս, եւ ականս պատուականս, մերտաքս[1] եւ զկոնքեռն ծովային, եւ զայլ նիւթսն, եւ ապա ընդելուզեալ՝ յեռմամբ ընդ միմեանս շարայարեալ առնէ թագ թագաւորի կամ անկանէ ծիրանի։ Այսպէս եւ աստուածաբնակն Մովսէս նախ զնիւթ խորանին հրաման առեալ հաւաքէր՝ կապուտակ եւ ծիրանի, կարմիր եւ բեհեզ, եւ զայլ /105բ/ նիւթն, զոր բերէր ժողովուրդն, եւ ապա ի նոցանէ զխորանն կազմէր վկայութեան (տե՛ս Ելից Իե. 1-9)։ Եւ այս զի՞նչ զարմանք է, եթէ մարդիկ զայս առնեն, այլ եւ արուեստաւորն ամենայնի Աստուած, յառաջ քան զամենայն զնիւթն, ստեղծանէր աշխարհի զԴ. տարերս եւ ապա ի նոցանէ զամենայն տեսակս, ուստի եւ եռամեծն Դաւիթ ասէ, որ իմաստութեամբն էր ճոխացեալ, թէ ամենայն արհեստ ունի ենթակայ եւ կատարումն։ Եւ երկաքանչիւրն կրկնակի՝ հուպ ենթակայ եւ հեռի, եւ հուպ կատարումն եւ հեռի։ Այսպէս եւ ըստ այսմ աւրինակի. որպէս թէ ի նաւակառութիւն հիւսնութեան ասել հուպ ենթակայ զընդհանուր փայտն, իսկ հեռի ենթակայ այս անուն փայտ է, որ պատշաճի ողնափայտ կամ քեղի, եւ հուպ կատարումն առնել նաւ, իսկ հեռի ճրագաձեւ կամ այծեմնաձեւ[2]։ Սոյնպէս եւ բանական արհեստիս հուպ ենթա-

1 Այսպես է բնագրում։

2 **Դաւիթ Անյաղթ**, էջ 53։

կայ մեզ աստուածաշունչ Հին եւ Նոր կտակարանքդ, իսկ հեռի ենթակայ, այսինքն՝ բան մարգարէին Դաւթի՝ բան սաղմոսին, որ ասէ. «Զայն Տեառն ի վերայ ջուրց», որ եւ պատշաճ է աւուրս խորհրդոյ: Իսկ հուպ կատարումն է, յորում ասեմք զճառն ըստ տեղւոյն, եւ ժամանակին, եւ դիմացն, իսկ հեռի կատարումն է տեսութիւն մտացն՝ այլաբանական յեղանակաւ իմա/106ա/նալի տեսութեամբ հայելն ի ներքին կողմ վարագուրի ճառին եւ տեսանել զամբարեալ եւ զծածկեալ գանձս իմաստութեան եւ գիտութեան Աստուծոյ՝ յամենայն նիւթականաց ազատ լինելով, զի ճառս է իբրեւ զմարմին, իսկ միտքն որպէս հոգի, որով անձնաւորի ճառս, որ ասէ. «Զայն Տեառն ի վերայ ջուրց»:

Արդ, ի վերայ ճառին, որ էր հուպ կատարումն չին[ու]ածոյ բանիս, յելանել, եւ ի մտանել, եւ ի հարկանել զխորանն թուեցաւ, որ կարգեաց զվերագիրս, թէ յորժամ եբեր Դաւիթ զտապանակն յԵրուսաղէմ ասացեալ է, սակայն կատարի ի վերայ Եզեկիայ, յորժամ կոտորեցան Ասորիք, եւ երկեղ մեծ անկաւ, որ ոչ իշխէին մտանել ի տաճարն եւ ի սրբութիւնսն, այլ ի գաւիթս եւ ի սրահս խորան հարկանել հրամայէր թագաւորն եւ մատուցանել նուէրս, որպէս եւ ասէ. «Մատուցէ՛ք Տեառն, որդիք Աստուծոյ» (Սաղմ. ԻԸ. 1), եւ «Զայն Տեառն ի վերայ ջուրց»:

Արդ, զայս եդաք ըստ հուպ եւ առաջեն տեսութեան բանիս, բայց ի վերայ մտացն, որ հեռագոյն ունի զկատարումն, յառեալ դիտեսցուք:

«Զայն Տեառն ի վերայ ջրոց» անուամբ միշտ սովոր է առնուլ զխոկումն բա[նա]կանիս խորհրդոց զբնաւորականն: Նոյն եւ զարտաքուստ մտեալն՝ եթէ յԱստուծոյ, եւ եթէ ի դիւաց՝ ըստ որում ասէ. «Կեցո՛ զիս, Աստուա՛ծ իմ, զի հասին ջուրք յանձն իմ» (Սաղմ. ԿԸ. 2), եւ «Մի՛ ընկղմեսցեն զիս /106բ/ պտոյտք ջուրց» (Սաղմ. ԿԸ. 16): Իսկ վասն աստուածայնոյն ասէ. «Գետն Աստուծոյ լի եղեւ ջուրբ, եւ զակաւսս Նորա արբեցուցեր» (Սաղմ. ԿԴ. 10-11): Եւ վասն բնաւորականին. «Նա ինքն ի վերայ ծովու հիմունս արկ նմա» (Սաղմ. ԻԳ. 2): Քանզի արդարեւ եւ ջուր դիւրահեղ, եւ ծփական խորհուրդքն, եւ դիւրաւ զորակութիւն իւրեանց խառնեն ընդ աստուածային կամ հակառակին համակամութեանն գոյնն:

Արդ, որպէս կանխաւ ասաց, թէ՝ «Որոտաց Տէր յերկնից, եւ ետ զձայն Իւր ի կարկուտ» (Սաղմ. ԺԷ. 14). յայտ է, թէ դիւական[3] խորհրդոցն սաստեաց: Նոյնպէս եւ աստ ասէ. «Զայն Տեառն ի վերայ ջուրց», այսինքն՝ ի վերայ բնաւորական խորհրդոցն աստուածային գիտութեանցն ազդեցութիւնք, զի այն ձայն է, որ զայս ջուր ի սէր նորին խռովեցուցանէ բարուք ծփմամբ:

Աստուած փառաց «Եւ որոտաց»: Այսպէս լուաք զՀոգւոյն [իջումն] ի սուրբ առաքեալսն՝ որոտմամբ եւ ձայնիւ: Արդ, որպէս ի նոքա զգալապէս վասն սքանչելի լինելոյ առ տեսողսն, նոյնպէս յամենայն մաքուր հոգի իմացականապէս որոտայ, եւ զվերին գիտութեանն ցաւղ ի նոսա արկանէ, եւ զայնր[4] փառացն տեղեկութիւն:

Տէրն Ինքն ի վերայ ջուրց բազմաց», «Եւ այսինքն՝ զի բազում եւ անթիւ խոկմունք, որ ծնանին ի խոհականս մտաց՝ ըստ որում ի չարն, այսպէս եւ ի բարին: Յիմոյս, ասէ, ի վերայ /107ա/ բազմութիւն խորհրդոցս տիրէ, զի ամենայն յԱստուած եւ յաղագս աստուածայնոցն է մտածութիւնքն: Եւ զայս ոչ եթէ որպէս կարծի անյա[ր]մար է առաջին ասացելոցդ, այլ կարի միաբան, քանզի զայն ցուցանէ, թէ պատարագ զիս եւ նուէր Աստուծոյ ի ձեռն Հաւր ոչ իմ զաւրութիւնս արար, այլ Աստուծոյ ձայնի ուժգնութիւնն, որ զաւրացոյց զիս ի յընթացս առաքինութեան, եւ որոտմամբ իմաստիցն Իւրոց ուսոյց ինձ գործել զնոյն, եւ Նորա է ամենայն եւ Նովաւ՝ ըստ այնմ, զոր առաքե[ա]լ ասէ՝ «Ո՛չ ես, այլ շնորհքն Աստուծոյ, որ ընդ իս» (Ա. Կորնթ. ԺԵ. 10): Նոյնպէս եւ սա՝ եթէ ո՛վ[5] հրեշտակք, եւ որ զիս նուիրէք, քահանա՛յք, վասն իմ սրբութեանս Աստուծոյ մատուցէք զփառս եւ զերկրպագութիւն, զի Նորա ձայնն եղեւ ի վերայ իմ, Նորա հոգին եհան յինէն զչար խորհուրդն, Նորա ձայնն բորբոքեաց յիս հուր սիրոյն, եւ ամենայն Նովաւ եղեւ[6]: Եւ այս մասնաւորաբար ճշմարիտ տեսութիւն մտաց բանիս, որ ասէ. «Զայն Տեառն»:

3 Ներսես Լամբր. բնագրում՝ դիւական:

4 Ներսես Լամբր. բնագրում՝ զայրն:

5 Ներսես. Լամբր. բնագրում՝ ոչ:

6 «Զայն Տեառն ի վերայ ջրոց... Նովաւ եղեւ» հատվածը բառացի մեջբերում է Լամբրոնացու Սաղմոսաց մեկնությունից. տե՛ս ՄՄ ձեռ. № 2613, էջ 161ա-161բ:

Բե՛ր այսուհետեւ մանրամասնաբար զիւրաքանչիւր բառն դասեսցուք: Նախ՝ թէ քանի՞ նշանակութիւն է ձայնի, եւ այլոց, եւ անուանցդ ըստ կարգի: Եւ երկրորդ՝ թէ յաղագս որո՞յ նշանակութեան է բանս: Եւ երրորդ՝ վասն որո՞յ բանն է, սահմանեսցուք: Բայց նախ տեսցուք զգործ եւ զեղանակ բաժանման եւ սահմանի:

Արդ, /107բ/ գործ բաժանման է առնուլ զսեռ եւ բաժանել ի տեսակս: Իսկ Պղատոն յերիս յեղանակս բաժանման աւանդէ մեզ, որոց առաջին այս է: Ասէ, թէ պարտ է զբաժանումն ի սեռականագունիցն լինել մինչեւ ցտեսակագոյնսն, եւ յայնկոյս տեսակագունիցն ոչ անցանել յանհատսն, քանզի ոչ են մակացական եւ մշտնջենաւոր, այլ այսաւր են եւ վաղիւն ո՛չ եւս. այս առաջին յեղանակ բաժանման:

Երկրորդ յեղանակ բաժանման, զոր պատուիրէ Պղատոն պահել՝ ասելով, թէ պարտ է, որ բաժանեն՝ ոճով բաժանել եւ ոչ գերազանցեալ աստիճանաւք այլափոխել, այլ կարգաւ: Եւ զի ախորժելի է Պղատոնի ոճով առնել զբաժանումն, իսկ յայտ արար ասելով, զի ըստ բաժանականն, ասէ, հնարս ոչ ինչ պանծասցի փախչել:

Երրորդ յեղանակ, զոր պատուիրէ յեղուտն առնել զբաժանումն, այլ ոչ ի մակեղուտն, զի մակեղուտքն անհուն են, եւ ոչ [է]նթակացուցանեն զբնութիւն որպէս եղուտքն[7]: Իսկ գործ սահմանի է զիւրաքանչիւր ոք ի գոյիցն սահմանել, եւ լինի սահման ի սեռէ եւ ի բաղկացուցիչ զանազանութեանց, որպէս սահմանաւ մարդոյն է իմանալ զբանս: Քանզի /108ա/ մարդ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ. աստանաւր կենդանին փոխանակ սեռի առաւ, եւ այլ բառքդ փոխանակ բաղկացուցիչ զանազանութեանց: Արդ, այսոքիկ այսքան:

Այժմ ըստ կանոնի բաժանականին, որպէս խոստացաք, նախ զձայնն տրամատեսցուք, որ ասէ. «Ձայն Տեառն», եւ ապա սահմանեսցուք:

Արդ, ձայնն երկակի է՝ կամ Այաւդեալ, կամ անյաւդ: Յաւդեալ՝ որպէս մարդոյ, կամ անյաւդ՝ որպէս անասնոյ եւ կամ որպէս անշնչիցն հնչմունք: Եւ երկաքանչիւրքն դարձեալ

7 «Իսկ Պղատոն... որպէս եղուտքն» հատվածը տե՛ս **Դաւիթ Անյաղթ**, էջ 148-149:

երկակի՝ կամ նշանական, կամ աննշանական: Յաւդեալ եւ նշանական՝ որպէս արծուի եւ եղջերու, վասն զի յաւդեալ է սիղղոյբայիւք, եւ նշանակեն զարծուին եւ զեղջերուն: Իսկ յաւդեալ եւ աննշանական՝ որպէս ձիակապիկն եւ եղջե[ր]ուաքաղն, քանզի այսոքիկ յաւդեալ են, բայց նշանակեն եւ ոչ ինչ: Իսկ անյաւդ եւ նշանական՝ որպէս հաջիւն չան, զի թէպէտ եւ անյաւդ է, նշանակ[է] զգալուստ մարդոյ կամ գազանի: Իսկ անյաւդ եւ աննշանական՝ որպէս հնչիւն քարի կամ փայտի:

Արդ, այսոքիկ այսպէս Աելոց՝ իմաստասէրք ոչ վասն անյաւդ ձայնի եւ ոչ վասն յաւդեցելոյ եւ աննշանակի՝ որպէս քերթողք առնուն ի կիր, այլ զ[յ]աւդեալն եւ զնշանակեալն առնուն ի կիր: Իսկ յաւդեալ /108բ/ ձայնն եւ նշանական երկակի է՝ կամ հանուր, կամ մասնական. մասնական՝ որպէս Սոկրատէս, հանուր՝ որպէս մարդ, ձի, արծուի: Այլ զմասնական ձայնն ոչ առնուն ի կիր, զի անորիշք են անբաւք, որպէս ասաց Պղատոն, այլ զհանրականն առնուն ի կիր: Եւ այս դարձեալ յաւդեալս, եւ նշանակեալս, եւ հանրականս երկակի է՝ կամ եղուտ, կամ մակեղուտ. եւ ասի մակեղուտ որպէս պատահումն, որ յէութիւն ունի զգոլն: Եւ իւրաքանչիւր ոք ի սոցանէ երկակի գոյ: Քանզի մակեղուտն երկակի գոյ՝ կամ միոյ բնութեան պատկանի, կամ բազմաց: Եւ եթէ բազում բնութեան պատկանի՝ պատահումն լինի, որ է երկակի՝ անջատական եւ անանջատական: Անջատական՝ որպէս նստել, գործել, եւ անանջատական՝ որպէս առծռունկն պնչատ, որպէս բազում բնութեանց պատկանի: Իսկ եթէ մու բնութեան պատկանի, յատուկ լինի, որ է մակեղուտ, որպէս յորժամ մարդոյ ասեմք յատուկ գոլ զծիծաղականն:

Ասի դարձեալ եւ եղուտ Աերկակի, քանզի կամ միոյ բնութեան պատկանի, կամ բազմաց: Եւ եթէ բազում բնութեանց պատկանաւորի, կամ ի զինչէումն ստորոգի եւ լինի սեռ. քանզի հարցեալ՝ զի՞նչ է /109ա/ մարդ, կենդանի՝ պատասխանեմք, որ բազում բնութեանց պատկանաւորի: Եւ կամ ի ներ որպիսումն ստորոգի եւ լինի տարբերութիւն, քանզի հարցեալք՝ որպիսի՞ ինչ [է] մարդ, զտարբերութիւնն պատասխանեմք՝ բանական, եւ այս բազում բնութեանց պատկանի: Եւ կամ

դարձեալ՝ ի ներ զինչէումն ստորոգի, եւ լինի տեսակ, քանզի հարցեալք՝ եթէ զի՞նչ [է] Սոկրատէս, ասեմք՝ մարդ, զտեսակն պատասխանատրեմք, որ միում բնութեան պատկանաւորի, քանզի միայն մարդ ասի մարդ: Եւ կամ ի ներ որպիսիէում ստորոգի, եւ լինի եղուտ յատուկ: Որպէս յորժամ հարցեալք՝ որպիսի՞ ինչ [է] մարդ, պատասխանեմք՝ մտաց եւ մակացութեան ընդունակ, որ է յատուկ մարդոյ[8]:

Արդ, այս ձայն յաւդեալ է, եւ նշանական, եւ ընդհանուր, եւ եղուտ, որ ինքն անե[ղ] [գ]ոլով՝ ձայնի[ւ]ս միայն գոյացոյց զամենայն էակքս՝ յանէ[ու]թենէ յէութիւն ածելով զամենայն, որպէս ասէ. «Ձայն Տեառն»:

Դարձեալ՝ տեսցուք եւ այլ ազգ յեղանակաւ զձայն, քանզի տրամատի եռակի՝ ի չորս բնաձայնս եւ ի քառակի կողմունս Բ. ստեղամբք հանդերձ, որ լինի Ժ.՝ ի պայծառութիւն եւ ի փառաբանութիւն սուրբ եւ աստուածընկալ խորանիս եւ ի հրճուումն մանկանց Եկեղեցւոյ, զոր քաղցրալից բարբառով հնչեցուցանեն ի լսելիս Աստուծոյ ի Դիոնէսիայ /109բ/ Արիսպագացւոյ նախերգացն պատմելով զհրաշս Աստուծոյ՝ անեղ, ամենակալ, Տէր, վեհագոյն անուն, Աստուած, Արարիչ ձայնի[9]: Եւ ձայնիւ նշանակիչ ամենայն գոյիցս Տէր, որ նախքան զամենայն զիմանալիսն, բաղկացոյց տասնեակ դասիւքն, զորս աւրհնաբանողս եւ փառաբանիչս Իւր կարգապետեալ, յորոց մինն անկեալ ի փառաց լուսոյն՝ անարժան գտեալ աւրհնելոյ զԱստուած: Իսկ զհետ իմանալի աշխարհին իմանայր զսգալի աշխարհս, եւ իմաստքն գործ լինէին: Ժ.մասնեայ գոլով եւ սա՝ մին ի լուսոյդ ի վայր եւ Է. մոլորակդ, եւ մին անմոլար գունդն, եւ բանն Աստուծոյ, որ վարէ զամենայն Ժ.երորդ[10]: Ընտրեաց ի հոգեղինացս ի զգալի աշխարհիս՝ Ժ.եակ դասիւք լեալ զհարսն, զնահապետսն, զաւրէնսդիրսն, քահանայս, դատաւարս, թագաւորս, մարգարէս, առաքեալս, վարդապետս, վկայս, զոր ուսոյց Հոգին Սուրբ երգաբանութեամբ՝ ի զանազան ժամանակս Ժ.եակ ձայնիւք աւրհնութիւն երգել Ամենասուրբ եւ Համագոյ

8 «Արդ ձայնն երկակի է... որ է յատուկ մարդոյ» հատվածը տե՛ս **Դաւիթ Անյաղթ**, էջ 110-111:

9 Հմմտ. «Յաղագս աստուածային անուանց», **Dionysius the Areopagite,** էջ 133-135:

10 Հմմտ. **Մովսէս Քերթող**, էջ 446, **Վանական Վարդապետ**, էջ 301:

Երրորդութեանն: Ի Հին Կտակին եւ ի Նոր աւետարանական քարոզութիւն Փրկչին մերոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի, զոր ուսաք, այսպէս:

[ԱՁ.] *Արդ, առաջին ձայնն նախատեղծին պարգեւեալ յԱստուծոյ քահանայական, եւ մարգարէական, եւ թագաւորական շնորհիւ ի հանդիսի անցանելով, իսկ /110ա/ յ[ո]րժամ արտասահմանեցաւ ի դրախտէն եւ յաւրհնութենէն զրկեալ գտաւ: Իսկ ի ծննդեանն Քրիստոսի հրեշտակք զնոյն առաջին ձայնիւք զաւետեալ հովուացն «զՓառս ի բարձանցն» (տե՛ս Ղուկ. Բ. 14) երգ զերգս ուսուցանեն եւ ի մկրտելն Յիսուսի յայտնեալ Սուրբ Երրորդութիւնն, քանզի իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի ջրոյ անտի, եւ ահա բացան Նմա երկինք, ետես զՀոգին Աստուծոյ, զի իջանէր իբրեւ զաղաւնի եւ գայր ի վերայ Նորա, եւ ահա ձայն ի յերկնից, որ ասէր. «Դա՛ է Որդի Իմ սիրելի, ընդ որ հաճեցայ» (Մատթ. Գ. 17): Եւ Յով[հ]աննէս զաւրհնութիւնս եւ զփառս մատոյց, եւ զհետ «Աւրհնեալ Տէր բնակեալն»[11] ձայնն, եւ հրեշտակային կարգաւորութիւնն, եւ այլ առաջնաձայն նման սոցին:*

[ԱԿ.] *Իսկ առաջնակողմն ձայնս կոչի մեծի Մովսէսի անցանելն ընդ ծովն ժողովրդեամբն, մարգարէութեամբ երգեա[ց] կողմաձայնիւ զԱւրհնեսցուք զՏէրն ի ծովու բաժանմանն վերաւրհնէին (տե՛ս Ելից ԺԵ. 1, 21), ըստ նմին աւրինակի եւ երից մանկանցն զհուրն ի ցաւղ փոխեալ [աստուած]ային կամաւն (տե՛ս Դան. Գ. 52-90), նոյնգունակ զՀարցն ընծայեցուցին Աստուծոյ: Իսկ որ ի նորումս, որ Ճրագլուցին պաշտի յԵկեղեցւոջ Քրիստոսի Աւրհնեսցուքն, եւ որ ի կարգին է ձայն, զոր եւ եբրական դասք յԱրմաւենեաց աւուրն երգէին զաւրհնութիւն ովսան/110բ/նայիւքն զՅիսուս, եւ մանկտին զխաղաղութիւնն տային, որպէս հրեշտակք յերկինս նոյն ձայնիւ (տե՛ս Մարկ. ԺԱ. 10), զոր եւ ասէ մարգարէս. «Ձայն ի վերայ», այսինքն՝ ի վերայ Կարմիր ծովուն եւ ցաւղոյն երից մանկանցն:*

ԲՁ. *Իսկ որ երկրորդ ձայնս կոչի յիջանելն Աստուծոյ ի Սինէական լեառն ամպեղէն խորանաւն՝ հրեշտակական բարբառքն որպէս փողոց հնչիւնս գոլով (տե՛ս Ելից ԺԹ.*

11 «Ժամագիրք», էջ 731:

18-19): Ուստի եւ Մովսէսի փողս կազմեալ, աւրհնելով զԱստուած երկրորդ ձայնիւ, եւ զնոյն աւր փողոց անուանէր տաւնս (տե՛ս Ղեւտ. ԻԳ. 24): Իսկ ի նորումս նոյն երկրորդ ձայնիւ ի յաւրհնութիւն Փրկչին ի վերայ վիմին հրեշտակն փողելով աւետարանէր կանացն, եւ այլք նմանապէս ձայնք, որ վասն Տեառն յարութեանն, որ եղեւն գետոցն բանականաց:

[ԲԿ.] Իսկ որ երկրորդ ձայնի կողմանակս կոչի հարկանելով քահանայիցն զԵրիքով կործանմամբն, որ եւ զեւթն նուիրական փողսն առ Մովսէսիւ եւ առ Յեսուաւ պատրաստեալ (տե՛ս Յեսու Զ. 13): Իսկ ի նորումս մեզ շնորհեցաւ ողբերգականաւ ասել զսաղմոսս յաղուհացսն, զոր եւ յՈւրբաթուն Մեծի զԱստուած աւրհնութեան ձայնն կարգեալ նոյնգունակ, եւ յամենայն ձայն ի կարգս նորին ձայնիւք յարմարեալս: Իսկ որ ստեղ նորուն կոչի առ Սամուէլի մարգարէիւ, իջեալ ի բազմադասք մարգարէիցն փողով, սրնկիւ եւ թմբկով երգել զաւրհնութիւնն Տեառն (տե՛ս Ա. Թագ. Ժ. 5): /111ա/ Իսկ ի նորումս կամաւորապէս եղելոյն ի գերեզմանի Փրկողին զմեզ, զորս կարգեալ է Շաբաթուն Մեծի սաղմոս. «Եղին զիս ի գբի ներքնում» (Սաղմ. ՁԷ. 7), եւ նմանապէս ձայնք:

Գ[Զ.] Իսկ երրորդ ձայնս առ Դաւթաւ մարգարէիւ, զորս Ը. դասիւքն երգէր առաջի տապանակին, զոր ինքեան չինեալ վերնատուն սուրբ՝ դնէր ի նմա (տե՛ս Բ. Թագ. Զ. 5): Իսկ ի նորումս յաւուր Պենդակոստէին, իջեալ Հոգին Սուրբ ի Վերնատունն յառաքեալսն, հնչմամբ մեծաւ եւ ուրախութեամբ լցոյց զնոսա եւ տաւնախմբաց ձայնս սաղմոսաց, որ հանապա[զ] կատարեմք յելս եւ ի մուտս կենաց մերոց (տե՛ս Գործք Բ. 1-13):

[ԳԿ.] Իսկ որ կողմն նորուն կոչի նաւակատիք լեալ տաճարին, եւ ձայնք քահանայիցն, զոր եւ Սողոմոն չինեաց, որով եւ Մովսէս զխորանն աւրհնեաց: Իսկ ի նորումս զԵկեղեցի սրբել եւ պայծառացուցանե[լ] ի ձեռն քահանայապետին, եւ նորուն սաղմոսաց ձայնք կարգք պաշտամանց:

[ԴԶ.] Իսկ չորրորդ ձայնս քահանայք աստի տաճարին հանապազակիր երգ առեալ նուագէին յելս եւ ի մուտս փառաւորութեան սե-

ղանոյն, եւ Զաւրաբաբէլի շի[ն-]եալն նմանապէս ձայնք: Իսկ ի նորումս նոյն ձ[ա]յնիւքս զապականեալ Եկեղեցի վերստին [նո]րոգել, եւ պայծառացուցանել, եւ սրբել ի ձե[ռն] քահանայապետին: Եւ ի Նիկիական ժողովքն հաւա/111բ/տամքն՝ «Զսեղան քո, Տէր»[12] ասելով, եւ «Քեզ վայելէն»[13], որ հանապազ պաշտի ի Սիոն՝ կատարեալ յաւուր յարութեան Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Իսկ կողմանակ ձայն Դկ. չորրորդիս Մակաբայեցիքն զերգս հրեշտակաց լուան ալէլուաւքն հանդերձ Յուդայ Մակաբէ, զպղծեալ տաճարն սրբեցին աւրհնութեամբք եւ գոհութեամբ ալէլուաւք հանդերձ (տե՛ս Ա. Մակ. Դ. 41-54): Իսկ ի նորումս նոյն կողմամբ ձայնիւ երջանիկ առաքելոցն ընկալեալ զՀոգին Սուրբ, եւ նորին եղանակաւք եւ ալէլուաւք ստողոգիքն կարգեցան ի Պենդէկոստէին աւուրսն, որ բերեն զՔրիստոսի նոր խորհուրդս եւ զձեռնադրութիւնս, նա եւ յայսմ ձայնի եւ ի ժամի կան, մնան վերջակողմանցս:

Իսկ որ վերջին ստեղն կոչի զսէրովբէիցն բարբառս լուեալ մեծի մարգարէին Եսայեայ, եւ որ շուրջ կալով զփառացն աթոռովն Տեառն Յիսուսի, եւ Նմա երգել զսրբասացութիւնն ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ, զորս եւ «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ Տէր զաւրութեանց» (Ես. Զ. 3) վերառաքելով նովին ստեղական ձայնիւս: Նա եւ երանելին Դաւիթ բազում երգոց եղանակաց եղեւ պատճառ՝ ոչ միայն ի յերրորդ ձայնին առ տապանակ անդր պարելով, այլ զտասնաղի սաղմոս ողոգութիւնն. զԺ. ձայնից բերէ զաւրինակս եւ զխորհուրդս, յորմէ բազումք ի սաղմոսացս /112ա/ կորեան: Իսկ ի նորումս նոյն ստեղական ձայն զՍուրբ Խորհրդեանն՝ զկենարար մարմնոյ եւ արեանն Տեառն եւ Փրկչին կատարեալ ուսաք յառաքելոցն եւ ի հոգեկիր վարդապետացն. յաղագս Այնորիկ, որ ճշմարիտ զենեալ է եւ միշտ կենդանի, այն զինքն պատարագ տայ Հաւր կամաց հաճութեան, եւ Ինքն զինքն ընդունի յաղագս աշխարհիս կենաց, զոր եւ այլ մարգարէ հուր ի բերան մերձեցելոյ սրբեալ եղեւ, այլ եւ զամենեցուն մաքրեալ զմեղս:

12 Կանոն Նաւակատեաց Սրբոյ Խաչին, Շարական, էջ 312:

13 Կանոն համարէն ինքնեցեալոց ի Քրիստոս, Շարական, էջ 414:

Արդ, այսքանեաւք ձայնիւք զարդարեաց զԵկեղեցի փառաց Աստուծոյ ոչ միայն յերկրի, այլ եւ ի յերկինս, եւ ըստ հաւատոց իմանալեաց՝ արժանաւորեաց ելանել հոգւոց արդարոց նախ ի Բեթղէհէմ մանկանցն կոտորելոց, եւ զհետ բազմահոյլ վկայիցն, որ ելին եւ խառնեցան ի զաւրս զուարթնոցն՝ ձայնակից լեալ նոցին, լցին զթիւ անկելոցն հրեշտակացն, զոր եւ մարգարէս Դաւիթ ասէ. «Ձայն Տեառն ի վերայ», եթէ ձայն Տեառն է արարիչ ամենայն ձայնից՝ որպէս ջրոց եւ ձայնի նոցա:

Զայն դարձեալ յաւդաւոր ձայն ասի մարդոյդ միայն սակս տառիցն զանազանութեան, եւ բարբախման, եւ երիւրման ի գոչմանէ ձայնի մերոյ, իսկ անասնոցն ոչ զանազանի տառիւքն խառնմամբ, /112բ/ այլ մ[ե]րկ յայսցանէ է[14]:

Եւ արդ, յերիսս յայսոսի[կ] զանազանի ձայնս մեր՝ ի շեշտ, ի բութ [եւ ի] պարոյկ, քանզի արդար եւ իսկ ըստ եր[ի]ս ըստ այսմիկ, որ ասէ, յաւդի ձայն բանաւոր կենդանոյս. շեշտիւն, որ է սուր, եւ բթիւն, որ է կարճ կամ ծանր, իսկ պարուկաւն, որ է շրջումն վերուստ ի վայր, եւ բեկումն ձայնի, եւ բթել ի սրութենէ: Եւ որպէս տարերք Դ. նիւթ են ամենայն մարմնոյ, այսպէս գիր, տարր եւ նիւթ է խաւսիցս: Եւ սոցա ձայնաւորք են ութ՝ ա, ե, է, ը, ի, ո, ւ, աւ: Եւ ձայնաւորք ասին, վասն զի ձայնս յինքեանց անպակաս ելուզանեն: Եւ ի ձայնաւորացդ երկարք են երկու՝ է, աւ, եւ սուղք Գ.՝ ե, ո, ւ, եւ երկամանակք Գ.՝ ա, ը, ի: Եւ երկամանակք ասին, վասն զի երբեմն ձկտին եւ երբեմն ամփոփին: Արդ, յաղագս ձայնի այսքան:

Ասասցուք եւ զերկրորդ Ագլուխն՝ եթէ յաղագս որո՞յ ձայնի է բանս: Արդ, վասն յաւդեալ եւ նշանական եւ որ տառիւքն զանազանի, ասէ, ձայնի:

Եկեսցուք եւ յերրորդ Եգլուխն եւ սահմանեսցուք զձայն, թէ զի՞նչ է: Զայն է վիրաւորութիւն աւդոյ՝ ըստ քերդողացն[15], այլ զայս սահման յոռի գոլ համարեցան իմաստա/113ա/սէրքն, զի ոչ զուգադարձի: Քանզի որ ձայն է, նա եւ վիրաւորութիւն աւդոյ, այլ ոչ որ ինչ վիրաւորութիւն աւդոյ, այն ինչ եւ ձայն, վասն զի եւ ասէրք

14 Յովհաննէս Երզնկացի, էջ 149:

15 Դաւիթ Քերական, էջ 1168:

ոք եթէ հարկանէ զաւդ, ոչ բացակատարէ ձայն: Վասն որոյ սահմանեն զձայն այսպէս. ձայն է բացակատարումն գանչեցելոյ ի մեզ հագագի եւ երիւրեցելոյ ընդ խոշորութիւն շնչափողին եւ տեսակարարեցելոյ լեզուաւ եւ մակալեզուաւ[16]:

Արդ, թէպէտ եւ նշանական ձայն է Աստուծոյ ձայնն, եւ տառիւք տպաւորեաց ի տախտակսն քարեղէն ի լերինն Սինեայ, այլ ոչ պարագրի ընդ այսու սահմանաւ, քանզի արարչական ձայն է եւ ոչ կարաւտի ձայնական գործեաց, զի անեղ էական է, եւ եղելոցս էակ, եւ ի վեր քան զամենայն սահման: Եւ այսոքիկ այսքան:

Եկեսցուք այժմ ի տեսութիւն այլոց բառիցդ եւ անուանց եւ ասասցուք, թէ վասն է՞ր Տեառն, ասէ, զձայնն, եւ ոչ ձայն Նորա կամ քո: Նոյնպէս եւ զայլսն ասէ. «Աստուած փառաց որոտաց, եւ Ինքն ի վերայ ջուրց բազմաց»:

«Զայն Տեառն Տեառն» ասելովն՝ որոշէ յարաբածական եւ ի ծառայական ձայնից, եւ ցուցանէ զճշմարիտ էրն: Իսկ էրն Բ. զաւրութիւնք են՝ արարչական եւ արքունական: Եւ ար[ար]չականին անուն է Աստուած, եւ արքունակա/113բ/նին՝ Տէր, եւ արարչականին է բարեգործելն եւ նախախնամելն: Եւ այս կրկին է՝ մին, որ առանց միջնորդի ասաց եւ եղեւ, հրամայեաց եւ հաստատեցան (Հմմտ. Սաղմ. ՃԽԸ. 5), եւ միւսն միջնորդիւ բնութեան՝ յարարչական ձայնէն սահմանեալք[17]:

Իսկ արքունականն երկակի է՝ մինն կամեցողացն եւ ոչ կամեցողացն տիրել արարչութեամբն՝ ըստ Եսայեայ, թէ՝ «Զեռն Իմ արար զայս ամենայն, եւ Իմ է ամենայն՝ ասէ Տէր» (Ես. ԿԶ. 2), եւ ըստ Դաւթի՝ «Քո են երկինք, եւ Քո է երկիր, զաշխարհս լրիւ» (Սաղմ. ՁԸ. 12), եւ Սողոմոն ասէ դարձեալ. «Տիրելդ Քո ամենայնի՝ խնայել տայ Քեզ յամենեսեան» (Իմաստ. ԺԲ. 16):

Եւ միւսն կամեցողացն միայն: Եւ այս դարձեալ եռակի՝ մինն սրբոցն, որք առնեն մաքուր վարուք զհրամանս Նորա՝ որպէս առաքեալքն, եւ մարգարէքն, եւ ամենայն սուրբք: Եւ երկրորդն, որ թէպէտ եւ անմաքուր են վարուք, այլ սպասաւոր լինին կամացն Աստուծոյ ի գործ ինչ՝ մասնաւորապէս Նաբուգո-

16 **Դաւիթ Անյաղթ**, էջ 75:

17 Հմմտ. **Փիլոն**, էջ 515-516:

դոնոսորի պատժելն Աստուծոյ զԻսրայէլ: Եւ երրորդն՝ ծառայութիւն մեղացն՝ ըստ առաքելոյ. «Մինչդեռ ծառայքն էիք մեղաց» (Հռոմ. Զ. 20), եւ «Մի՛ եւս ծառայել ձեզ մեղացն» (Հռոմ. Զ. 6): Եւ տէրդ որքան ասի տէր, ըստ այսքան եղանակի եւ ծառայն ասի, զի տէրն եւ ծառայն յառընչիցն է, /114ա/ որպէս հայրն եւ որդին, եւ կրկնապատիկն, եւ կէսն, զի առինչքն, որ ինչ են, այլոց ասին բացորոշաբար: Այսպէս եւ տէրն ծառային ասի տէր, եւ ծառայն տեառն է ծառայ, վասն որոյ ասէ. «Զայն Տեառն ի վերայ ջրոց»:

Արդ, զվերինն եւ զներքին ոմանք քանակին ասացին գոլ՝ բայցահայելով առ ոլորտս աշխարհի եւ միջոց. ոչ ինձ թուի ըստ որում տեղի, այլ ըստ որում այլոց՝ արդեաւք ստորոգութեա՞նց զայս պատահեաց գոլ, քանզի ըստ որում ոլորտք առընչին, այլ ոչ քանակին, իսկ ըստ որում վերին եւ ներքին ուրին ստոր[ոգ]ութիւն եղիցի, քանզի որպէս ուր ասէք ընլիկիոջն կամ ներաստում: Այսպէս վերնումն կամ ներքնումն: Այսպէս ուրեմն առաւելուր, այլ ոչ քանակ այսպիսիքս են: Եւ եւս զի ոչ վայրապար ներքինն եւ վերինն ներհականք են, այլ ըստ որում ներհակացն ընդունականք են, քանզի ոմն ծանրութեան եւ ոմն թեթեւութեան ընդունական գոլ բնաւորեցան, քանզի աւդ եւ հուր թեթեւ գոլ բնութեամբ զվերին դասն հասեալ կալան, իսկ ջուր եւ երկիր՝ զներքին:

Արդ, «ձայն Տեառն ի վերայ ջուրց» ասելովն՝ ի վերայ ջուրցն միայն ցուցանէ գոլ, այլ ոչ ի վերայ ցամաքի, ապա զիա՞րդ կամ այլոց տարեացդ ասէ Մովսէս, թէ՝ «Ասաց Աստուած. «Բխեսցէ երկիր» (Ծննդ. Ա. 11), եւ Դաւիթ՝ «Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, եւ բա/114բ/նիւ Տեառն երկինք հաստատեցան, ի Հոգւոյ բերանոյ Նորա ամենայն զաւրութիւնք նոցա» (Սաղմ. ԼԲ. 5-6):

Արդ, որպէս Տէրն յԱւետարանն շուշան ծաղկովն զամենայն ծաղիկս նշանակէ զարդարեալ յԱստուծոյ, եւ ագռաւովն զամենայն թռչունս կերակրէ (հմմտ. Մատթ. Զ. 28, Ղուկ. ԺԲ. 24), նոյնպէս եւ աստ «ի վերայ ջուրցն» ասելովն՝ զձայն Տեառն յարարչագործութեանն ցուցանէ, եւ ի վերայ համասեռիցն գոլ զնոյն ձայն արարչական. որպէս զջուրն՝ ջրային կենդանեաւք, եւ զերկիր՝ երկ-

բայնաւք, եւ զաւդ՝ աւդայնաւք զարդարեալ ձայնիւ:

Արդ, վերին եւ ներքին, որպէս ասացաք, ուրին եւ կամ առընչին, եւ ըստ այլոց քանակին է, եւ Աստուած անորակ եւ անքանակ է, անուր եւ աներբ: Այլ ի վերայ գոլ ջրոյն զձայն Տեառն զայն բացայայտէ՝ ոչ ըստ տեղւոյ գոլ ի վերայ, այլ զի յառաջ, եւ նախ, եւ ի վեր քան զամենայն արարածական բնութիւն եւ էութիւն է, եւ յետոյ եւ վերջին ամենայն էիցս է՝ ըստ այնմ. «Ես առաջին, եւ Ես առ յապայ» (Ես. ԽԱ. 4), եւ եթէ՝ «Ես Ալֆա եւ Օ, եւ Այբ, եւ Քէ, առաջին եւ վերջին» (Յայտ. ԻԲ. 13):

Եւ դարձեալ՝ ձայն Տեառն, եւ Աստուած փառաց՝ Հոգին, եւ Տէրն Ինքն ի վերայ՝ Որդին: Եւ քանզի նախ դնէ զարքունական անունն, եւ ապա ի միջումն զարարչականն: Եւ յետոյ դարձեալ զարքունականն՝ նախադասելով զարքունականն. յայտ առնէ, թէ ոչ ի /115ա/ հարկէ, այլ տիրաբար իշխանութեամբ՝ վասն բարերարութեան շարժեցաւ յարարչագործութիւն ամենայնի:

Իսկ «Աստուած փառաց որոտաց» զբարերարութեանն զառատութիւնն յայտնէ՝ յարարչագործութենէն մինչեւ ի կատարած աշխարհիս:

Տէր Ինքն ի վերայ»:

«Եւ Զանսպառ յաւիտեանն նշանակէ, զի անդ ողորմութիւն կամ շնորհաւք թողութիւն ոչ է, այլ հանդէսք դատաստանի եւ հատուցումն գործոց:

«Ի վերայ ջուրց»՝ ի վերայ Յորդանանու եւ ի Թաբաւր:

Աստուած փառաց «Եւ որոտաց»: Հոգին Սուրբ ի Յորդանան եւ ի Վերնատունն: Եւ լինի այս յաղթական, յորժամ Աստուծով յաղթութիւն հաստատի, որպէս Մովսէս ի կործանմանն փարաւոնի ասէր. «Աւրհնեսցո՛ւք զՏէր, զի փառաւք փառաւորեալ է» (Ելից ԺԵ. 1): Եւ «փառք Աստուծոյ» կոչեն Գիրք կամ զանբաւ մեծութիւնն եւ զպատիւ, եւ կամ զյաղթող զաւրութիւնն, կամ զանճառելի պայծառութիւնն, յորժամ յայտնեսցի: Զմեծութիւնն՝ ըստ այնմ. «Ո՞վ է Սա թագաւոր փառաց» (Սաղմ. ԻԳ. 8), եւ «Զփառս Իմ այլում ոչ տամ» (Ես. ԽԲ. 8), եւ «Մեծ են փառք Տեառն» (Սաղմ. ճԼէ. 5), եւ զզաւրութիւնն»՝ ըստ այնմ. «Փառաւորեցայց ի փարաւոն եւ յամենայն զաւրս նորա» (Ելից ԺԴ. 5): Որպէս

թագաւորին փառք զաւրութիւնն է, նոյնպէս եւ Աստուծոյն է: Եւ զպայծառութիւնն՝ ըստ այնմ. «Մեծ վայելչութեան փառաց Նորա ոչ գոյ բաւ» (Երեմ. ԻԳ. 9): Զայս տեսանեմք եւ ի զգալիսս, զի արեգականն փառք պայծառութիւնն է, որպէս /115բ/ գրէ Պաւղոս. «Այլ փառք արեգականն, եւ այլ փառք լուսնի եւ աստեղաց, քան զաստղ առաւել է փառաւք» (Ա Կորնթ. ԺԵ. 41), եւ «Փառաւորեցան երեսքն Մովսէսի» (Հմմտ. Ելից ԼԴ. 29): Այնպէս եւ «Աստուած փառաց» ասէ զմեծութիւնն եւ զպատիւ, եւ զզաւրութեանն, եւ զպայծառութեանն: Իսկ որոտալ զահաւորապէս իջումն Հոգւոյն Սրբոյ ասէ ի Յորդանանն, ի Վերնատունն՝ որոտմամբ եւ ձայնիւ՝ ըստ այնմ. «Միթէ բարբա՞ռս հանգոյն Նմա որոտայցես» (Յոբ Խ. 4), եւ թէ՝ «Որոտաց Տէր յերկնից, եւ Բարձրեալն ետ զձայն» (Բ Թագ. ԻԲ. 14):

Ընդ, որոտումն է հողմն Աշարամանեալ ընդ ամպոյ խոնաւի եւ թանձրագունի՝ ի ձեռն ինքեան պատառեալ զշարունակ ծալմունս ամպոյն՝ խաչիւն, շաչիւն եւ թնդիւն առնելով, եւ որոտումն ասեմք այնմիկ: Հողմ ինչ յոյժ վարեալ մտանէ ի մէջ ամպոց, եւ անդ ըմբռնեալ լինի յամենայն կողմանէ, եւ պատառելով ամենայն հողմն՝ վրդովելով ելեալ լինի, եւ զամպն ջերմացուցեալ՝ ըստ պատառմանն, որ եւ ծագումն արարեալ լինի զփայլատակումն: Ուստի եւ յառաջ որոտումն լինի, թէպէտ եւ յետոյ լինի լսելի՝ յապաղեալ ի յաւդոյն եւ հեղգագոյն հասանել բնաւորեալ, եւ փայլմանն ի հեռաստանէ երեւեալ, իսկ որոտման ի հուպ լինել լսելեացն, վասն որոյ երեւումն հրոյն /116ա/ կանխագոյն եղեւ էութիւն՝ ունելով առ ի տեսութեան հասումն ի բացուստ: Իսկ որոտումն, յորժամ ի լսելիս հասանի, լինի լսելի: Եւ զայսպիսի ձայնս «բարբառ Աստուծոյ» սովոր են կոչել Գիրք Սուրբք՝ ըստ այնմ. «Եթէ ձգեաց Մովսէս զձեռն իւր յերկինս, եւ ետ Տէր բարբառս եւ կարկուտ» (Ելից Թ. 23), եւ փարաւոն ասէր. «Կացէք յաղաւթս վասն իմ առ Տէր եւ դադարեսցեն ի լինելոյ ձայնքն Աստուծոյ» (Ելից Թ. 28), եւ «Սամուէլ կարդաց առ Տէր, եւ ետ Տէր ձայնս եւ անձրեւս» (Ա. Թագ. ԺԲ. 18): Այլ աստ վասն Հոգւոյն իջման ասէ, որ ի Վերնատունն:

Տէր Ինքն ի վերայ «Եւ ջուրց բազմաց»՝ Յի-

սուս, զի անդ յայտնեցաւ Երրորդական Աստուածութիւնն, ուր եւ բացաւ արգանդ Սուրբ Աւազանին: Իսկ «Ջուրց բազմաց» ասէ, զի ամենայն ջուրք աւրհնեցան եւ տուան ի լուացումն Աւազանին մկրտութեան, որպէս ի հրամանն ջուրց, թէ՝ «Բխեսցեն ջուրք» (Ծննդ. Ա. 20), ամենայն ջուրք առին զաւրութիւն ծննդեան, այլ եւ ամենայն ծնունդք ի ջրոյ լինին, ի խոնաւութենէ սերման՝ ի ձայնէ Տեառն սահմանեալ, որպէս ասէ. «Եւ Տէր Ինքն ի վերայ»[18]:

Եւ քառակի իմանի. առաջին՝ արարչական, եւ երկրորդն՝ սահմանական, եւ երրորդն՝ ծննդական, եւ չորրորդն՝ յարատեւական: Արարչականն, որով գոյացան ջուրք ամենայն: Եւ ծննդականն, որով հրաման առին բխել /116բ/ զանազան սեռս կենդանեաց եւ թռչնոց: Իսկ սահմանական, որ ասաց. «Ցայդ վայր եկեսցես եւ մի՛ անցանիցես» (Յոբ ԼԸ. 11), եւ թէ՝ «Սահման եդ եւ ո՛չ անցանեն, եւ ո՛չ եւս դառնալ ի ծածկել զերկիր» (Սաղմ. ՃԳ. 9): Իսկ յարատեւական, զի ոչ պակասին կամ առաւելուն տարերքդ կամ տեսակ կենդանեացդ, այլ յարամնան անփոփոխելի, վասն որոյ ասէ մարգարէս. «Տէր Ինքն ի վերայ ջուրց բազմաց»: Եւ քանզի թէպէտ ջուր ասի հոմանունաբար, այլ ի զանազան տեսակս տարբերի, վասն այսորիկ յոքնակի ասաց յաւդիւն եւ բազմաց: Զի որպէս տեսաք իմանալի եւ զգալի, այսպէս եւ ջուր իմանալի է եւ զգալի:

Իմանալի ջուրն բաժանի երկակի՝ յանեղ ջուրն եւ յեղական իմանալի ջուր: Յանեղ՝ ըստ այնմ, որ ասէ. «Զիս թողին աղբիւր ջրոյ կենդանւոյ» (Երեմ. Բ. 13), եւ թէ՝ «Ի Քէն է, Տէ՛ր, աղբիւր կենդանութեան» (Սաղմ. ԼԵ. 10), եւ Տէրն, թէ՝ «Գետք յորովայնէ Նորա բխեսցեն ջրոց կենդանութեան» (Յովհ. Է. 38):

Իսկ եղական իմանալի ջուրք դարձեալ երկակի ասի եւ նա՝ հրեշտակական եւ բանական խոկումն մարդկան՝ ըստ այնմ. «Զայն թեւոց նոցա իբրեւ զձայն ջուրց բազմաց» (Յայտ. Թ. 9), եւ Դանիէլ ասէ. «Ամբարձի զաչս իմ, եւ ահա այր մի զգեցեալ փառս եւ ընդ մէջ իւր ածեալ յոսկւոյն Ովփազայ, /117ա/ եւ մարմին նորա ծովագոյն» (Դան. Ժ. 5-6): Իսկ բանական խոկումն, որ ի մարդիկ

18 **Վարդան**, էջ 102:

ասին ջուր՝ ըստ այնմ. «Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ» (Սաղմ. ԽԵ. 5), եւ «Գետն Աստուծոյ լի եղեւ ջուրք» (Սաղմ. ԿԴ. 10). վասն առաքելոցն ասէ եւ մարգարէիցն: Այսպէս եւ զհակառակն իմայ:

«Ջուր ստութեան» կոչի սատանայ եւ գործակցեալք նորա՝ չար դեւք եւ մարդիկ՝ ըստ այնմ. «Մի՛ ընկլցին զիս պտոյտք ջուրց, եւ մի՛ ծածկեսցեն զիս անդունդք խորոց, ջրհոր մի՛ [կափուսցէ զբերան իւր ի վերայ իմ]» (Սաղմ. ԿԸ. 16)՝ զչար խորհուրդն նշանակելով եւ զնոցին վերակացուսն՝ զմարդիկ եւ զդեւս:

Իսկ զգալի ջուր ի բազում տեսակս տարորոշի եւ նա: Ի ջուր, որ է մի ի չորից տարեարցդ, եւ ունի երկու որակութիւն՝ ի ցրտութիւն եւ ի գիջութիւն, ի կաթն, ի յե[ւ]ղ եւ ի մեղր, եւ ի սերմ ամենայն, որ ի կենդանեաց են սոքա՝ ի ձէթ, ի գինի: Ի ջուր ամենայն խոտոց, եւ ծաղկանց, եւ ծառոց, եւ պտղոց, որ ի պէտս եւ ի վայելս մարդկան տուան յԱստուծոյ, յորոց վերայ տէր է, քանզի «ջուր» կոչի Աստուած (Յովհ. Է. 37), եւ «Իւղ թափեալ» (Երգ Ա. 2), եւ «Խնծոր» (Երգ Բ. 3) եւ այլ ամենայն:

Դարձեալ՝ տարբրական ջուրդ հատանի յԲ.՝ ի ջուրն, որ ի վերոյ հաստատութեանդ, եւ ի ջուրն, որ ի ներքոյ հաստատութեանդ: Եւ ի վերոյ ջուրն զատի յԲ. կիսագունդս: Իսկ որ ի ներքոյ հաստատութեան, ջուր եռակի բաժանի՝ ի ծովս, ի լճակս եւ ի գետս: Եւ վասն զի /117բ/ ջուրն մի է բնութեամբ՝ որպէս բոլոր մարդկութիւնս մարդադասի տեսակին անուամբն յորջորջեալ, այսպէս եւ «մի գետ» կոչէ զամենայն գետս տեսակին անուամբն, եւ թէպէտ բազում հետ գոն: Իսկ յԱստուածաշունչ Գիրս «մի, ասէ, գետ՝ եթէ ելանէր յԵդեմայ ոռոգել զդրախտն» (Ծննդ. Բ. 10) եւ անդի բաժանի ի չորս առաջս. «Անուն միումն Փիսոն. նա է, որ պատէ զամենայն երկիրն Եւիլատայ, անդ ուր ոսկին է, եւ ոսկի երկրի այնորիկ ազնիւ է: Անդ է սուտակն եւ ակն դահանակն: Եւ անուն գետոյն երկրորդի Գեհոն. նա է, որ պատէ զամենայն երկիրն Եթովպացւոց: Եւ գետն երրորդ՝ Տիգրիս. նա է, որ երթայ յանդիման Ասորեստանի: Եւ գետն չորրորդ՝ Եփրատէս» (Ծննդ. Բ. 11-14):

Փիսոն գետ ելանէ յարեւելից հիւսիսոյ եւ գայ ի հարաւակողմն Հնդկաց եւ մտանէ ի ծովն Կարմիր: Հնդիկք Գանգէս կոչեն, եւ Պարսիկք՝ Վեռոտ, Յոյնք՝ Ինդոս, Եբրայեցիք՝ Փիսոն, զի Դ. ակն է, ելանէ իւրաքանչիւր տեղւոյ անուամբն կոչին: Եւիլատ զներքին Հնդիկք ասեն, եւ Յոյնք զԵւիլատ Պելապոնացւոյ աշխարհ կոչեն, եւ Պարսիկք՝ Ապրշահր, անդ ուր ոսկին է ազնիւ, որ բուսմամբ է, զոր պահեն մրջմունք, ուր ասեն զգոհարն հալուէ Դ. ազգ՝ ինկրէ, անդրատարազ, ժայռաւոր, ծակոտկէն: /118ա/ Եւ անդ է սուտակն եւ ակն դահանակ: Սուտակն կարկեհանն է, եւ յականց գիրքն «կայծ» ասի եւ գտանի յԱփրիկէ[19]: Եւ զի Փիսոն ի Ծովն մեծ մտանէ ըստ կողմանց հարաւոյ՝ յարեւմտից յՈվկիանոս, եւ Ովկիանոս պատէ զամենայն երկիր, եռացեալ ակն ի սահմանս Կարկեդոն Լիբէացւոց երեւի յԱփրիկէ: Եւ էր կարմիր եւ լուսաւոր՝ արեան նշան ունելով եւ գտանի ի գիշերի եւ տեսանի ի հեռաստանէ, վառի եւ չիջանի, եւ որ ունի զնա, չէ հնար ծածկել, թէպէտ եւ ջանայ բազում հանդերձիւ: Լոյսն երեւի արտաքուստ՝ գազանաց երկեղ եւ զբաղմանց փարատիչ, եւ է սա անդրեայ բորբոքեալ հրով Հոգւոյն ընդ Քրիստոսի խաչեալ: Ահա մի ի բազում ջրոցն էր սա, յորոյ վերայ էր Տէր Հոգին Սուրբ, որ տպաւորեալ ի հրեղէն լեզուս՝ նստեալ ի վերայ նորա, վասն որոյ ասէ մարգարէս. «Տէր ի վերայ ջուրց բազմաց»: Իսկ դահանակն շափիւղայն է եւ ծիրանէգոյն՝ իբրեւ զդիպակ ի սեւոյ, եւ այլեւս բազում ազգք: Եւ թագաւորական ո[սկ]ի ստիքս խիտ ունի ի մատանի եւ ի քրամիթթ թագաւորի, որ ի յաճախ կապի, զի ցանկալի է սա եւ ախտահալած՝ լեսեալ կաթամբ: Բժիշկ է քոսոյ եւ սնկան, եւ զսա ետես Մովսէս ընդ ոտիւք Աստուծոյ ի լերինն եւ գտանի ի Հնդիկս Եթոպացւոց, վասն որոյ ասեն զտաճարն Դիոնէսի է, որ անդ երեք հարիւր /118բ/ եւ վաթսուն եւ հինգ աստիճան ունել համակ ի շափիւղայէ, եւ թէ անհաւատալի թուի՝ իւրաքանչիւր աստիճան ունի անձնաւոր ակն մի: Եւ է սա ի նահապետաց Իսաքար, եւ աւրինակ երանելւոյն Պաւղոսի, որ յերգս Աւետարանին իբրեւ զաւդ եւ զջուր փո[փո]խական արար զկամս իւր ընդ հրեայսն՝ հրէայ, եւ ընդ հեթանոսսն՝ հե-

19 «Ժղլանք», էջ 66բ-67ա:

թանոս, եւ յամենայնի՝ ամենայն, որով եւ զամենէսեան շահեցաւ (տե՛ս Ա. Կորնթ. Ի 20-22):

Գեհոն, որ կոչի Նելոս, զոր Էսայ[ի] Ռենոյ Կիոտայ[20] ասէ (տե՛ս Ես. ԻԷ. 12), եւ հինքն Եգիպտոս ձայնէին, գայ ի հարաւոյ, ի Լուսին լեռնէ, անցանէ ընդ Եգիպտոս, ընդ արեւելից եզրն Եթովպացւոց՝ մերձ ի Կարմիր ծովուն, եւ բաժանի ի յեւթն վտակս եւ առնէ երիս լիճս՝ զՄուռիդոտ, զԱրելիք, զՍերբանիտէ, եւ յարեւելից Աղեքսանդրէ մտանէ յԵգիպտական ծովն:

Տիգրիս, որ է Դկլաթ, ելանէ ի Զորրորդ Հայոց, ի Հաշտէն գաւառէ, ի գեղջէն Ոլոր, ի լերանցն Կորդուաց, հատանէ զԱսորիս եւ զՄիջագետս, խառնի յԵփրատ եւ պատելով զԲաբելոնիւ՝ անցանէ ի Պարսկական ծովն[21]: Իսկ Եփրատ ելանէ ի Կարնոյ եւ ի Տարաւնոյ, անցանելով ի Զորրորդ Հայս, հատանէ զԱսորիս եւ խառնի ի Դկլաթ[22]՝ անցանեն ընդ ծովն /119ա/ ասացեալ:

Եւ մանս գետոցս այսոցիկ դրախտ ոչ է, բայց եթէ ելեալք ի դրախտէն մտանեն ի ծոց երկրի, եւ ընդունիչ երակաւք ձեւեն զթանձրութիւն երկրի եւ գան աղբիւրանան միւսանգամ, որ յԱրեւելս, եւ որ ի Հարաւ, եւ որ ի Հայս, որպէս թէ աւետաւորք եւ հրաւիրակք անդրէն կոչելով զհալածեալ բնութիւնս, յոյս տալով եւ միխիթար տարագրելոցս:

Եւ կոչէ Փիսոն զազգն Սեմայ, եւ Գեհոն՝ զծառայն Քանան յազատութիւն, եւ Տիգրիս եւ Եփրատէս զազգն Յաբեթի յընդարձակութիւն[23]:

Եւ են Դ. գետքս նշանակ չորից առաքինութեանց՝ խոհականն, եւ արիութեանն, եւ ողջախոհութեանն, եւ արդարութեանն[24], որ են ընդդիմութեան ախտից՝ ըստ գերազանցութեան եւ ըստ պակասութեան, եւ աւրինակաւ զբանս հաւաստեցուսցուք ի վերայ մասանց հոգւոյն, քանզի եռամասնեայ գոլով հոգի՝ ունի բան, ցասումն եւ ցանկութիւն: Եւ բանին խոհականութիւն, որ է չափաւորութեան միջելով, առնի իւր ծայրս ըստ առաւելագանցու-

20 Զոհրապյան հրատարակության մեջ՝ Ռինոյ Կորուրայ, իսկ գաղընթերցվածներում՝ Ռինոկորայ, Ռինոկուրուրայ, Ռինուրկորայ:

21 «Ժղլանք», էջ 67ա:

22 Անդ:

23 **Վարդան Արեւելցի**, թ. 22ա, **Եղիշէ**, էջ 783:

24 Հմմտ. **Փիլոն**, էջ 9-10:

թեան՝ զխորամանգութիւն, իսկ ըստ նուազութեան՝ զանմտութիւն: Իսկ արիութիւն, որ է եւ սա, չափաւորութիւն միջակելով ունի ծայրս ըստ առաւելագանցութեան՝ զյանդգնութիւն, իսկ ըստ նուազութեան՝ /119բ/ զերկչոտութիւն, նոյնպէս եւ այլքն, ապա ուրեմն խոհականութեան, եւ արիութեան, եւ այլոց առաքինութեանց: Մի է ներհական, որ է չար: Իսկ իւրաքանչիւրոց ծայրիցն խորամանգութեան, որ է չարութիւն, յերկոքին են խոհականութեան՝ ըստ չափաւորութեան: Իսկ անգիտութիւնն դարձեալ չարում ելում. խոհականութիւն՝ ըստ չափաւորութեան, իսկ խորամանկութեան՝ ըստ գերազանցութեան:

Դարձեալ՝ յանդգնութեան, որ է չարութիւն, երկոքին են. արութեան՝ ըստ չափաւորութեան, իսկ երկչոտութիւն՝ ըստ նուազ[ութեան]: Երկչոտութիւն դարձեալ չարում ելում:

Դարձեալ՝ արութիւն՝ ըստ չափաւորութեան, իսկ յանդգնութիւն՝ ըստ գերազանցութեան. այսպէս եւ այլքն: Ապա ուրեմն մէջն, զի բարի է, մի՛ ընդունի ներհական զչարն, իսկ երկաքանչիւր ոք զծայրիցն չարելով, ըստ որում չար ելով, զբարին ներհական ունի, եւ ըստ որում եւ առաւել կամ նուազ զընդդիմակսն նոցա: Եւ ընդդիմակքն են ութ՝ որպէս եւ ասացաք, եւ առաքինութիւնքն՝ չորք, որոց նշանակք են գետքս:

Փիսոն, որ թարգմանի «բերանոյ այլայլութիւն», Եւիլատ՝ «երկունս»: Խոհականն է այս, որ ի բերանոյն այլայլմանէ երեւի իմաստութիւնն ի կազմուած բանին: Իսկ Եւիլատ նշանակ անմտի, /120ա/ որ միշտ յերկունս գոլով, երկոքին բանն փառաց եւ ընչից ցանկալով՝ ոչ երբէք լաւ ծնունդս ծնանի գործս բարիս եւ հաճոյս Աստուծոյ, որ ունի գործս բարիս եւ հաճոյս Աստուծոյ, որ ունի զխոհականն պարիսպ ածելով, պատէ արգելով ի ներհակ վատթարէն, որպէս ասացաք՝ զՏէր ունելով ի վերայ բազմութեան ջրոց խոհականին, որպէս ասէ. «Տէր ի վերայ ջուրց բազմաց»:

Եւ «ազնիւ ոսկի»՝ աննենգ, եւ անխոտան, եւ հրացեալ աստուածպաշտութեամբ հաւատն էր, եւ երկու ակունքն՝ ներտրամադրեալն եւ յառաջ բերեալն: Սուտակն խոստովանութեան յեղանակ, քանզի Յուդայ գրեալ է ի նմա, որ է անմարմին, քանզի ոչ ասաց քար, զի

նիւթ է: Եւ ակն դահանակ նիւ-թական վաստակոց է աւրինակ. զայս ասացեալն այլոց գործովք ցուցանէ աշխատութեամբ, քան-զի Իսաքար[25] գրեալ էր ի նմա, որ եդ զուս իւր աշխատել վասն դեղնագոյնականն, որ նշա-նակէ զվաստակեալսն յուսանել եւ յուսուցանել: Եւ դեղնեալ է միշտ վախելով՝ գուցէ թէ վրի-պիցի յերանելի կատարածէն: Իսկ խոստովանողն հրացեալ է գոհութեամբ Տեառն եւ արբեալ զգաստ արբեցութեամբ, զի գինէգոյն է սուտակն:

Իսկ Գեհոն թարգմանի «լանջք» կամ «եղջիւրց եղով»: Եւ երկոքին սոքա վար-ժիչք են արութեան, քանզի առ լանջանաւքն, որ սիրտն է, կայ արիութիւնն՝ /120բ/ եղջիւր ածե-լով եւ պատերազմ տալով ընդ երկչոտութիւնն, որ է Եթովպիայ, որ կոչի «նուաստութիւն»[26]: Եւ նուաստ է երկչոտութիւն, եւ արիութիւն թշնամի է նմա:

Տիգրիս «արութիւն», «առութիւն» թարգմանի, կամ «լայնութեան», կամ «ցաս-կոտութեան»: Այս է ողջախո-հութիւն, որ արիանայ ընդդէմ հեշտութեանն լայնացեալ համ-բերութեամբ եւ ցասնու ընդդէմ այնմ, որ ուղղելն թուի զմարդկա-յին տկարութիւնս ցանկութիւն, զի Ասորիք «ուղղիչք» թարգ-մանին, եւ Տիգրիսն՝ «վագր», որ է գազան ահագին ընդդէմ որսողացն[27]: Ի կորուստ խոտան ցանկութեանն Եփրատէս կոչի «խրախարար» կամ «պտղաբե-րութիւն», որ է նշանակ արդա-րութեան, որոյ տեղին ոչ ցու-ցաւ, զի առանձինն մասն յոգ-ւոջն ոչ ունի, որպէս խոհականն՝ զբանն, արիականն՝ զսրտմտա-կանն, ողջախոհականն՝ զցան-կականն: Այլ հասարակ բաշխա-տուր է արդարութիւնն այլոցն ամենեցունց եւ կարգաւորիչ, եւ լինի այս, յորժամ իշխէ վատթա-րին բանն, ցասմանն եւ ցանկու-թեանն արդարութիւնն:

Արդ, այսոքիկ ստուերագ-րութիւնք տիպք են չորից աւետարանչացն ստուգապէս: Մատթէոս՝ Փիսոն, որ վիճակե-ցաւ որդւոցն Սեմայ, զի հրէիցն հաւատացեալքն խնդրէին ի Մատթէոսէ, որ գրեաց նոցա յետ Է. ամի վերացմանն /121ա/ Տեառն յերկինս, եւ ի ձեռն Թով-մայի եւ Բարդողիմէոսի անդ տա-բաւ, ուր գետս այս ընթանայ եւ քարոզեցաւ Եբրայեցերէն գրեալ

25 ՍԲԹ, էջ 445, «Ժղլանք», թ. 67ա:

26 ՍԲԹ, էջ 445, հմմտ. «Ժղլանք», թ. 67բ:

27 ՍԲԹ, էջ 446, հմմտ. «Ժղլանք», թ. 67բ:

անդ, ուր ոսկին է՝ հաւատն ճոյլ եւ յստակ, անաղտ եւ անխմոր: Եւ Բ. ակունքն, Բ. աստիճանքն եւ աթոռքն պատուականք հայրապետութեան եւ թագաւորութեան անակնառու եւ անկաշառ, որպէս պատմեն տեսողքն: Ըստ որում եւ «երգ կենաց» կոչի Մատթէոս, զի քաղցրացաւ նոցա իբրեւ ճաշակ կենաց եւ անմահութեան պատճառ:

Ի սկզեղեցկապէս նշանակէ Գեհոն զՄարկոսի Աւետարանն, որ անդ ձեռնադրեցաւ ի սրբոյն Պետրոսէ եպիսկոպոս, եւ անդ գրեցաւ զհետ ԵԺ. ամի չարչարանացն Տեառն խպտի լեզուաւ համառաւտ բանիւ հանգոյն վարդապետին իւրոյ Պետրոսի, որ չափաւորն էր ի խաւսս: Վասն որոյ եւ «բարձր պատուէր» լսի անուն աւետարանչին, կամ զի բազում բանս միջելով բարձրացուցանէ, կամ ոչ երկրաւոր եւ խոնարհագոյն ինչ աւետարանէր, այլ հոգեւոր երկնաւոր բարձրագոյն եւ կամ պատուար ի տանիս՝ ըստ Ասորւոց, զոր աւրէնքն հրամայէ պսակ դնել շուրջ զտամբ՝ չանկանել ումեք ի խոնարհ: Եւ սա նոյնպէս զգոյշ եւ պատրաստ բանիւ, զի մի՛ անկանել ի հաւատոց եւ ի տանէ արագ մեռանիցի:

Երրորդ գետն Տիգրիս խորհուրդ Ղուկասու աւետարանին՝ /121բ/ սկսեալ առ Տիգրիս գետով եւ առ Ասորեստանեաւք ի ձեռն Պաւղոսի քարոզութեանն, որպէս եւ նոյն ասէ. «Զոգայ յԱրաբիայ, եւ դարձեալ դարձայ ի Դամասկոս» (Գաղ. Ա. 17), որ են գաւառք Ասորեստանեաց, զի Ղուկաս աշակերտէր Պաւղոսի, եւ զնորա քարոզութիւն գրեաց ընդարձակ բանիւ՝ ըստ ոճոյ վարդապետին իւրոյ զկնի Ի. ամի չարչարանաց Տեառն, զոր այլք յետ ԻԵ. ամի ասեն, որ եւ բժիշկ գոլով արուեստիւ՝ զբազումս բժշկեաց ըստ հոգւոց եւ յարոյց ի հիւանդութենէ եւ ի մեռելութենէ մեղաց: Ըստ որում եւ «յարութիւն» թարգմանի Ղուկաս, զոր եւ Վարդապետ նորին ասէ. «Արի՛, որ ննջեսդ, եւ կանգնեաց ի մեռելոց, եւ լուսատու լիցի քեզ Քրիստոս» (Եփես. Ե. 14):

Զորրորդ գետն զՅովհաննէս քարոզէ յայտնապէս, վասն որոյ ոչ գրեցաւ տեղի Եփրատայ, որպէս եւ մեծն այն աստուածաբանն՝ ոչ ի տեղւոջէ եւ ոչ ի ժամանակէ սկիզբն[28]*:*

28 «Ժղլանք», թ. 67բ: